

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOSOPHY, PSYCHOLOGY

№ 1(46)
2025

«Բանբեր Երևանի համալսարանի, Փիլիսոփայություն, Հոգեբանություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Философия, Психология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета». Three issues of “Journal of Yerevan University. Philosophy, Psychology” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Редакционная коллегия:

Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝

Главный редактор:

Editor-in-chief:

Հարությունյան Էդվարդ (փ.գ.դ., պրոֆ.,
edvardharutyunyan@ysu.am)

Арутюнян Эдуард (д.флс.н., проф.)

Harutyunyan Eduard (Sc. D. in Philosophy,
Professor)

Ավանեսյան Հրանտ (հ.գ.դ., պրոֆ.,
avanesyanh@ysu.am)

Аванесян Грант (д.псих.н., проф.)

Avanesyan Grant (Sc. D. in Psychology,
Professor)

Բաղրամյան Մարիա (փ.գ.դ., պրոֆ.,
maria.baghramian@ucd.ie)

Баграмян Мария (д.флс.н., проф., Ирландия)

Baghramyan Maria (Sc. D. in Philosophy,
Professor, Ireland)

Բարսեղյան Հակոբ (փ.գ.դ., Գանադա,
hakob.barseghyan@utoronto.ca)

Барсегян Акоп (д.флс.н., Канада)

Barseghyan Hakob (Sc. D. in Philosophy,
Canada)

Գոսсерիես Աքսել (փ.գ.դ., պրոֆ., Բելգիա,
axel.gosseries@uclouvain.be)

Госсериес Аксель (д.флс.н., проф., Бельгия)

Gosseries Axel (Sc. D. in Philosophy, Professor, Belgium)

Չարարյան Սեդրակ (փ.գ.դ., պրոֆ.,
szakaryan@ysu.am)

Закарян Сейран (д.флс.н., проф.)

Zakaryan Seyran (Sc. D. in Philosophy,
Professor)

Շեմոյտել-Պյոտրովսկա Մագդալենա

(հ.գ.դ., պրոֆ., Լեհաստան, *m.zemojtel-piotrowska@uksw.edu.pl*)

Жемойтель-Петровска Магдалена

(д.псих.н., проф., Польша)

Zemojtel-Piotrowska Magdalena (Sc. D. in
Psychology, Professor, Poland)

Լոբովսկի Դմիտրի (հ.գ.դ., պրոֆ.,

Ռուսաստան, *lubovsky@yandex.ru*)

Лубовский Дмитрий (д.псих.н., проф.,
Россия)

Lubovski Dmitri (Sc. D. in Psychology,
Professor, Russia)

Խաչատրյան Նարինե (հ.գ.թ., դոց.,
n_khachatryan@ysu.am)

Хачатрян Нарине (к.псих.н., доц.)

Khachatryan Narine (PhD in Psychology,
Associate Professor)

Շոշկարյան Մարիաննա (փ.գ.դ., պրոֆ.,
ՄՄՆ, *markosh@uga.edu*)

Копкарян Марианна (д.флс.н., проф., США)

Koshkaryan Marianna (Sc. D. in Philosophy,
Professor, USA)

Շահվերդյան Գայանե (հ.գ.դ., պրոֆ.,
gayaneshahverdyan@ysu.am)

Шавердян Гаяне (д.псих.н., проф.)

Shahverdyan Gayane (Sc. D. in Psychology,
Professor)

Պետրոսյան Սիլվա (պատ. քարոզիչ,
փ.գ.թ., դոց., *silva.petrosyan@ysu.am*)

Петросян Сильва (отв. секретарь,

к.флс.н., доц.)

Petrosyan Silva (Executive Secretary, PhD,
Associate Professor)

ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ФИЛОСОФИЯ PHILOSOPHY

- Օվսաննա Նահապետյան* – Մարդակենտրոն գոյաբանության մայրամուտը. հետկենսաբանական մարդը 5
- Овсанна Нагапетян* – Закат антропоцентрической онтологии: постбиологический человек
- Ovsanna Nahapetyan* – The Sunset of Anthropocentric Ontology: Post-Biological Man
- Լիլիա Խաչատրյան* – Բանականության հանրային գործադրման մարտահրավերները հետճմարտության ժամանակաշրջանում 17
- Лилия Хачатрян* – Трудности публичного использования разума во времена постправды
- Lilia Khachatryan* – Challenges for the Public Use of Reason in the Post-Truth Times
- Հայարիի Սահակյան* – Հեղինակության գերակայություն. ազդեցությունն ու խոչընդոտները բովանդակության զարգացման վրա 32
- Айарпи Саакян* – Верховенство власти: его влияние и препятствия на разработку контента
- Hayarpi Sahakyan* – The Supremacy of Authority: Its Impact and Barriers on Content Development

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ПСИХОЛОГИЯ PSYCHOLOGY

- Գայանե Շավերդյան* – «Vuca» աշխարհը հոգեկան խանգարումների դասակարգման լույսի ներքո (ռուս.) 45
- Гаяне Шавердян* – Мир «vuca» в свете классификации психических расстройств
- Gayane Shaverdyan* – The World “Vuca” in the Light of the Classification of Mental Illness (in Rus.)

Հրանտ Ավանեսյան, Ելենա Մուրադյան – Ուսանողի մասնագիտական ինքնության ձևավորման գործընթացի նշանակությունը արդի պայմաններում (ռուս.) 58

Грант Аванесян, Елена Мурадян – Значение процесса формирования профессиональной идентичности студента в условиях современности

Hrant Avanesyan, Yelena Muradyan – The Importance of the Process of Forming a Student’s Professional Identity in Modern Conditions (in Rus.)

Էլինա Ասրիյան, Քրիստինե Զաչյան, Հասմիկ Սարգսյան – Հոգեբանական բարեկեցությունը որպես առաջնորդի ընտրության սոցիալ-հոգեբանական գործոն 71

Элина Асриян, Кристине Зазян, Асмик Саргсян – Психологическое благополучие как социально-психологический фактор выбора лидера


Elina Asriyan, Kristine Zazyan, Hasmik Sargsyan – Psychological Well-Being as a Socio-Psychological Factor in Choosing a Leader

Մահակ Հովհաննիսյան, Արսեն Լոկյան – Մոդելավորող գիտափորձում ներգրավված մասնակիցների վարքի կառավարման հոգեբանական առանձնահատկությունները 83

Саак Оганесян, Арсен Локян – Психологические особенности управления поведением участников, вовлеченных в моделирующем эксперименте

Sahak Hovhannisyanyan, Arsen Lokyan – Psychological Characteristics of Participants’ Behavior Management in Modeling Experiments

ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ. ՀԵՏԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՐԴԸ

ՕՎՍԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ * 
Երևանի պետական համալսարան

Մարդու ստեղծագործական կարողությունների և մարդկության հոգևոր ու բարոյական առաջընթացի անհամամասնական զարգացման հետևանքով ժամանակակից մարդու կյանքի բարոյական համատեքստը «շագրենու կաշվի» նման սկսել է մաշվել ու փոքրանալ: Խնդիրն այն է, որ հետարդիականության դարաշրջանի գիտությունն ու տեխնոլոգիական նորագույն նվաճումները ոչ միայն հիմնովին փոխել ու փոխում են մարդու կենսագործունեության երբեմնի գոյաբանական կարգի առարկայական հիմունքները, այլև մարդու էությունն ու բնույթը, ոչ միայն նրա մարմինը, այլև բարոյական ընկալումներն ու հոգևոր ներաշխարհն ընդհանրապես: Մարդու այդ նոր տեսակը այլևս մարմնական եզակիություն չէ, քանի որ գենետիկայի մակարդակում ձևափոխված և մեր ժամանակների գերմարդուն ներկայացնող կենսաբանական ու տեխնիկական օրգանների այդ խառնուրդը (կիբորգ) այլևս չի արտահայտում բնական մարդու էությունը (սամոստ) և վերածվում է տեխնիկապես փոխարինելի կազմավորման:

Ավելին, նյութական անհագուրդ պահանջումների բավարարմանը միտված սպառողական մեր աշխարհում մարդն այլևս գնահատվում ու կարևորվում է տնտեսական բարգավաճմանը նպաստելու «արդյունավետության» տեսանկյունից: Մի անհերքելի ու մտահոգիչ իրողություն, ինչը պահանջում է նորովի իմաստավորել մարդու սոցիալական գոյաբանության հոգևոր համատեքստի կառույցը մարմնավորող հաստատունների (սոցիալականություն, բարոյականություն, կյանքի իմաստ, կատարելություն, մարդասիրություն) փոխակերպումների ընթացքն ու հետևանքները:

Բանալի բառեր – *ապակենսաբանականացում, տեխնածին կեցություն, «սոցիալականի մահը», գերմարդ, կիբենետիկական անմահություն, տրանսհումանիզմ, հետմարդ*

* **Օվսաննա Նահապետյան** – ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասիստենտ

Овсання Нагапетян – ассистент кафедры истории, теории философии и логики ЕГУ

Ovsanna Nahapetyan – Assistant at YSU Chair of History and Theory of Philosophy and Logic

Էլ. փոստ՝ onahapetyan@ysu.am. <https://orcid.org/0000-0001-5201-4736>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 17.01.2025

Գրախոսվել է՝ 27.01.2025

Հաստատվել է՝ 14.03.2025

© The Author(s) 2025

Կյանքի կազմակերպման յուրաքանչյուր մշակույթ նախագծում է սոցիալական մի տարածություն, որտեղ էլ հենց ձևավորվում է մարդկային ինքնության կառուցվածքն ու մարդու սոցիոմշակութային տեսակը: Այլ կերպ ասած՝ մարդը պատմական հանգամանքների թելադրանքով նախագծված «կազմավորում» կամ «ստեղծագործություն» է և մարմնավորում է տվյալ ժամանակաշրջանի մշակութային ոգին: Բայց այդ պարագայում անգամ հնարավոր «շեղումները» լիովին բացառված չեն, և պատմական այս կամ այն դարաշրջանում մարդու «լուսանցքային» տեսակի գոյությունը ինքնին վկայում է, որ հատկապես մեր օրերում մշակույթի սահմանադիր իրավասությունների բնույթը հարաբերական է, և ցանկացած սահման հարաբերական է¹: Ավելին, թեև կատարելության ձգտումը սոցիալականությունը բնութագրող հիմնարար հատկանիշներից է, բայց այդ ճանապարհին մարդուն բաժին հասած փորձությունների ընթացքն ու վերջաբանը խնդրահարույց են: Բանն այն է, որ յուրաքանչյուր քաղաքակրթական ու մշակութային նվաճում առաջադրում է մարդու ինքնահաղթահարման ու ինքնագերազանցման սոցիալական գոյաբանության մի համատեքստ, որում կատարելության կարելի է հասնել ոչ միայն ներսից՝ հոգևոր կամ բարոյական աճի միջոցով, այլև տեխնոլոգիական այնպիսի միջամտություններով, որոնք կարող են փոխակերպել մարդու կյանքը, մարմինն ու միտքը: Ինչպես ասում են՝ մարդկային կեցությունը «բացասող» գոյաբանություն է, ինչի շնորհիվ մարդը կարող է իր իսկ ուժերով ժխտել կամ վերափոխել իր ինքնությունը և դառնալ այն, ինչ նախկինում չէր: Հակառակ պարագայում՝ նա այդպես էլ կմնար սոսկ ֆիզիկական մարմին²: Փաստորեն մարդն ի սկզբանե պարադոքսալ էակ է եղել հենց այն պատճառով, որ չէր կարող մարդ դառնալ մնալով սոսկ որպես ֆիզիկական կազմավորում (մարմնականություն), բայց և չէր կարող դեն շարտել ֆիզիկականի (մարմնականության) շրթաները առանց իրեն կենդանական վիճակի հասցնելու: Վիճակի պարադոքսալությունն այն է, որ բնական սահմանափակությունները հաղթահարելու նպատակով գործադրված ջանքերի արդյունքում մարդն ակամա հայտնվում է մեկ այլ, հնարավոր է ավելի անհաղթահարելի նյութական կախվածության մեջ: Մի իրավիճակ, երբ գիտական ու տեխնոլոգիական նվաճումների շնորհիվ կենսաբանական մարմնի «բարեփոխումների» արդյունքում մարդու սոցիալականությունը զրկվում է սուբյեկտիվությունից և հայտնվում աշխարհում «արկանված» և իր վերահսկողությունից դուրս ու ինքնավար գոյաբանական մի նախագծում, որտեղ սահմանադիր իրավասություններ ունեցողն այլևս մարդասիրական «թուլություններից» ձերբազատված տեխնոլոգիական կեցություն է: Ավելին, ակնկալվում է, որ սոցիալականի այս նոր դրսևորումներում մարդու

¹ St' u **Делез Ж.** Тысяча плато: Капитализм и шизофрения. М., 2010, էջ 397:

² St' u **Кожев А.** Диалектика Реального и феноменологический метод у Гегеля. В кн. «Идея смерти в философии Гегеля». М., 1998, էջ 47:

կենսաբանական մարմինը տեխնոլոգիական միջամտությունների և փորձարկումների արդյունքում կարող է ընդդիմանալ բնության դրվածքին, «չեղարկել» մահկանացու լինելու «դատավճիռը» և ձեռք բերել գոյության նոր, ոչ կենսաբանական ձև³: Այն, որ գիտատեխնիկական հեղափոխության ամեն հաջորդ ալիք էապես ընդլայնում է մարդու հնարավորությունների հորիզոնը, և նա հետզհետե «գերմարդու» կերպարանք է ստանում, անվիճելի իրողություն է, բայց անվիճելի է նաև, որ տեխնոլոգիական այդ «բարենորոգումների» արդյունքում «կյանքը սկսում է ծառայել ամենուր գործող մեքենայականին»⁴: Բայց մարդու «կերպարանափոխման» այս էվոլյուցիան հավանաբար անխուսափելի է, որովհետև սոցիոմշակութային զարգացման արդյունքում նրա կենսաբանական տեսակը թեև հասել է լուրջ հաջողությունների, բայց շարունակում է մնալ անկատար և բնածին սահմանափակումներով էակ, ով, սակայն, օժտված է ինքն իրեն հաղթահարելու և գերազանցելու գործությամբ և ցանկության դեպքում կարող է հիմնովին այլակերպվել ու իրենով կանխորոշել մարդաբանական ու արժեքաբանական հետագա «իրադարձությունների հորիզոնը»⁵:

Մարդկային կյանքը կազմակերպված ու կանոնակարգված կեցություն է, որի դրվածքից էլնելով՝ կարելի է մոտավոր պատկերացում կազմել մարդու «մարդկայնացման» ու կեցությունից նրա կախվածության չափի մասին: Ի սկզբանե գոյության բավարար հիմունքի պակաս ունեցող մարդու էկզիստենցիալ ճակատագիրը ամփոփված է կեցության սահմանափակումների հաղթահարման պատմության մեջ: Այդ պատմության առաջին, գոյաբանական իմաստով բախտորոշ փուլում մարդու տիպական կերպարը ներկայացնողը ամեն հաջորդ պահին գոյության արտուրդը ներքնապես ապրող այն Միզիփոսն էր (Կամփու), ով ամեն ձախողումից հետո համառորեն շարունակում էր սարն ի վեր քարշ տալ կեցության բեռը, քանի որ հյուսված էր կեցության մեջ և ենթակա էր նրան: Բայց, ինչպես ասում են, կյանքի էվոլյուցիան շարունակական է, և Միզիփոսի համառության մեջ արդեն իսկ մարդակենտրոն աշխարհ ստեղծելու ենթատեքստ կար: Բոլորովին էլ պատահական չէ, որ հետագա ժամանակներում ընդլայնվում են մարդու գործունեական հմտություններն ու իրավասությունները, և վերափոխված «Միզիփոսը» աստիճանաբար գերիշխանություն է հաստատում կեցության վրա և իր գոյության պայմանները դարձնում է **«ենթարկված կեցություն»**: Փաստորեն քաղաքակրթությունը հերթական անգամ հրապարակ է նետել մարդու մի նոր տեսակ, ով թեև ազատվել է կեցության բեռը սարն ի վեր գլորելու անհրաժեշտությունից, բայց դեռ **հանդուրժում է** կեցության «հարևանությունը»: Սակայն, ի մի բերելով մարդաբանական

³ St' u **Дубровский Д. И.** Человек и компьютер: новая реальность // **Дубровский Д. И.** Сознание, мозг, искусственный интеллект. Сб. статей. М., 2007, էջ 232:

⁴ **Jünger F. G.** Die Perfektion der Technik. Maschine und Eigentum. Frankfurt am Main, 1949, p. 44.

⁵ St' u **Huxley Julian**, In New Bottles for New Wine. London, 1957, էջ 17:

փոխակերպումների ներկա միտումները, կարելի է ասել, որ մարդու և կեցույթյան միջև հաստատված այս «զինադադարը» խիստ ժամանակավոր է, քանի որ հետարդիականության մեր ժամանակներում ձևավորվում է գերմարդու հավակնություններ ունեցող մարդու մի նոր տարատեսակ, ով ոչ միայն ուզում է լիովին մոռանալ իր «սիզիփոսյան» տանջալի անցյալը, ով այլևս ոչ միայն չի հանդուրժում կեցության «հարևանությունը» և ուզում է վերջնականապես թոթափել կեցության բեռը, այլև մարդկային ու կեցութենականի հարաբերակցման անհրաժեշտություն այլևս չի զգում, քանի որ նրա աշխարհայացքում կեցությունն ավելորդ է: Գերմարդու հավակնություններ ունեցող այս նոր մարդու առանձնահատկությունը հենց այն է, որ նվաճում ու արմատախիլ է անում ոչ միայն իր շուրջը եղած կեցութենական-գոյական դրսևորումները կամ, այլ կերպ ասած, սեփական կյանքի երկրային գոյության պայմանները, այլև իր իսկ էկզիստենցիալ-կենսական ակունքները (սեռ, ծնունդ, մահ, տառապանք և այլն):

Կարելի է ասել, որ մարդու մարդաբանական այս տեսակի ոչ այնքան հեռավոր ազգականը բարուց ու չարից անդին գործող Նիցշեի «գերմարդն» էր, ով, սակայն, ըստ ամենայնի, պետք է վերածնվեր մարդու անհատականությունն արտահայտող մարմնականությունը սուբյեկտիվ ուժով լցնելու միջոցով, մինչդեռ հետարդիականության մեր աշխարհում մարմնականությունն ու մենթալությունը ասես տեղերը փոխել են. մարմինը դարձել է «ընթեռնելի» բովանդակության ներքին, իսկ մտածելակերպը (մենթալությունը)՝ արտաքին կողմը:

Բայց ամբողջ հարցն այն է, որ ժամանակակից մշակութային տարածության մեջ մարդկային կեցության մոդուսի նախադրյալներ հանդիսացող ներքին ակտիվության ու ազատության որակների իմաստափոխման արդյունքում մարդն աստիճանաբար կեցությունը իրենով անելու և իրեն ենթարկելու (տիրելու) հավակնություններ է դրսևորում և ջանում է դասական սոցիալականության կեղծանմանակը հանդիսացող մեկ այլ կեցության մեջ զարգացման նոր հորիզոններ բացել: Կարող ենք ասել, որ մարդը ինչ-որ իմաստով վերածվել է իրեն թշնամի գործակալի, քանի որ տեխնածին այս նոր գոյաբանական նախագծում նա ևս վերածվում է մի տեխնածին կազմավորման, որի կյանքն ասես սխիվում է նպատակառացիոնալ և հոգեզուրկ գործունեության մեջ՝ ձերբազատված ամեն կարգի **«հուզական ստրկությունից»:**

Հարկ է նկատել, որ դասական սոցիալականության շրջանակներում մարդն աշխարհը ընկալում էր որպես որոշակի կանոններով և օրենքներով առաջնորդվող մի ամբողջական համակարգ, որտեղ նա տիրապետող արժեքների ու չափանիշների համատեքստում կարող էր կազմակերպել ու կանոնակարգել սեփական կյանքն ու ներաշխարհը: Այդ համակարգում նա սոցիալական, բարոյական մարդ էր ոչ թե այն առումով, որ նրա պատկերացումներն ու վարքը մշտապես անբասիր էին ու առաքինի, այլ այն առումով, որ նա միշտ

գիտակցում էր իրենից դուրս գտնվող և ընդհանուր կարգից բխող պարտավորությունները: Մինչդեռ անսահման գայթակղություններով առլեցուն հետադիականության մեր աշխարհում, որտեղ շուկան և պահանջարկը վաղուց արդեն կյանքի կազմակերպման ու կանոնակարգման օրենսդիր կարգավիճակ ունեն, ապակենսաբանական հնարավորություններով լիցքավորված և սուբյեկտից հաճախորդի վերածված մարդու կենսական ուժերն այլևս ընկալվում են որպես առավելագույն շահույթ ենթադրող ներդրում: Պատահական չէ, որ ժամանակակից առևտրի կենտրոններն ասես վերածվել են մեր ժամանակների ոգին մարմնավորող նորագույն տաճարների, որտեղ մարդ-հաճախորդը սպառողական շահերը բավարարող «նվիրաբերություններ» է կատարում: Մարդկային մրջնանոցը, կասեր Ա. Մենտ-Էքզյուպերին, թեև նախկինի համեմատ ավելի է հարստացել ու ավելի շատ բարիքների է տնօրինում, բայց նրան տակավին մի էական բան պակասում է. նա գնալով ավելի քիչ է իրեն մարդ զգում⁶:

Այնպիսի տպավորություն է, որ աշխարհն ասես նորից վերադարձել է իր «հեթանոսական» մանկությանը և նոր կուռքեր է հորինում, որոնք, սակայն, ոչ թե անիմանալի ու անհաղթահարելի բնական ուժերի հանդեպ վախից ու ակնածանքից են ծնվում, այլ ձեռակերտ են և մարմնավորում են գիտության ու տեխնիկայի «աստվածային» հնարավորությունները: Հաշվի առնելով այս իրողությունը՝ որոշ հեղինակներ ենթադրում են, որ մարդկությունը հայտնվել է մի աշխարհում, որը ոչ թե այլևս փիլիսոփայական իմաստով է գուժում «պատմության ավարտը», այլ հենց բառացիորեն, և այդ ավարտը վրա կհասնի ոչ թե քաղաքակրթական բախումների, այլ մշակույթի «հոգու մահվան» պատճառով, քանի որ արդի քաղաքակրթությունը այդ «նոր հեթանոսներին» ներարկել է ժամանակակից առաջընթացի ուժն ու ամբարտավանությունը, բայց մոռացել է ոգու մասին՝ նրանց ընդամենը դիտարկելով որպես տեխնոմշակութային կազմավորումներ⁷: Ի դեպ, մարդու հետկենսաբանական ապագայի այս մեկնարկը տրվեց այն ժամանակ, երբ «Աստծո մահն» ավետող նոր ժամանակների քաղաքակրթական ոգին սաղմնավորեց և ապա կենսագործունեության ասպարեզ հանեց ինքն իրեն հաղթահարող գերմարդու այն տեսակին, ով երկրային դրախտի ու երկնային հավերժության ակնկալիքներ ունի ոչ թե գերբնական ուժերից, այլ ամենակարող բանականության կամքից ու գիտական նվաճումների շնորհիվ տեխնիկապես բարենորոգված մարմնից: Այս առումով կարող ենք ասել, որ մարդու այդ տեսակը այլևս մարմնական եզակիություն չէ, քանի որ գենետիկայի մակարդակում ձևափոխված և մեր ժամանակների գերմարդուն ներկայացնող կենսաբանական ու տեխնիկական օրգանների այդ խառնուրդը (կիբորգ) այլևս չի արտահայտում բնական մարդու էությունը (սամոստ) և վերածվում է տեխնիկապես փոխարինելի կազմավորման կամ

⁶ Տե՛ս **Сент-Экзюпери А.** Военные записки. 1939-1944. М., 1986, էջ 47:

⁷ Տե՛ս **Федотов Г. П.** Судьба и грехи России. Избранные статьи по философии русской истории и культуры. СПб., 1997, т. 1, էջ 68:

«բաժանելի անհատի»⁸: Այն, որ գիտության ու տեխնիկայի զարգացման շնորհիվ մարդը կարող է մարմնի ինչ-ինչ վնասված մասեր փոխարինել նույն գործառույթը կատարող տեխնիկապես փոխարինելի սարքերով և հաղթահարել կյանքի որակի վրա մարմնական «խափանումների» հարուցած բարդությունները, ապրելու հորիզոնը ընդլայնելու իմաստով ինքնին հեռանկարային նվաճում է: Բայց ամբողջ հարցն այն է, որ մարդու բնական ու սոցիալական կարգավիճակների միջև հսկայական խզվածություն կա, և մարդու երկփեղկված էությունը բնութագրող այդ երկու հիմունքների հաշտեցման հնարավոր միջնորդի դերում կարող է հանդես գալ մարդկային մարմնականությանը բնորոշ ապրելու բնագործ կամ, պատկերավոր ասած, ինքնապահպանման բնագործ օժտված մարդկային մարմնի «կենսաբանական բանականությանը»:

Եթե այդպես է, ապա հարց է ծագում՝ մարդկային մարմնի տեխնիկական համարժեքներն արդյո՞ք օժտված են ինքնապահպանման բնագործ և արդյո՞ք կարող են արգելափակել կենսաբանականի և սոցիալականի վերջնական խզմանը ձգտող գերմարդու տեխնածին հավակնությունները: Եթե ոչ, ապա Ֆուկոյի նման մենք էլ պետք է փաստենք, որ պատմական իմաստով «սոցիալական մարդը» ոչ այնքան հեռու անցյալի արարվածք է, և նույնքան հնարավոր է, որ նա մի օր կարող է այնպես անհետանալ, ինչպես ավամերձ ավազի վրա խզրզված դեմքը⁹:

Ինչպես տեսնում ենք, մարդու կենսաբանության տեխնոմշակութային ընտելացման խնդիրն ունի ինչպես մարդաբանական, այնպես էլ մշակութային ենթատեքստ, քանի որ նրա կենսաբանական կողմի «վերանորոգման» արդյունքում հիմնովին փոխվում են մարմնի կենսաբանական ու սոցիոմշակութային հիմունքները: Խնդիրն այն է, որ եթե սոցիալականության դասական ըմբռնման շրջանակներում մշակույթը դիտարկվում էր որպես բնությանը հարմարվելու փոխհատուցող արհեստական միջավայր, ապա հետարդիականության մեր ժամանակներում այն աստիճանաբար վերածվում է հպատակեցման գործիքի: Ավելին, եթե նախապես մարդու մշակութային «ընտելացումը» ընթանում էր հոգևոր մակարդակում, առանց միջամտելու նրա կենսաբանական բնույթի վրա, ապա մեր օրերում մարդու մարմնական տարածությունը վերածվել է տեխնոմշակութային ներխուժումների հրապարակի, որտեղ մասնավորապես փորձարկվում են անմահության զանազան դեղամիջոցների հնարավորությունները: Մարդն ասես հայտնվել է գիտափորձնական լաբորատորիայում, և կյանքի հավերժության երազանքն այլևս ոչ թե մետաֆիզիկայի, կրոնի ու առասպելների ոլորտին առնչվող մտահայեցողական խնդիր է, այլ տեխնոմշակութային գերմարդուն արժանի իրատեսական առաջնահերթություն¹⁰: Ընդ որում, այս դեպքում խոսքը ոչ թե մարմնի ֆիզիկական մահից հետո մարդու

⁸ Տե՛ս Գуревич П.С. Феномен деантропологизации человека // Вопросы философии, 2009, № 3, էջ 24:

⁹ Տե՛ս Фуко М. Слова и вещи. Археология гуманитарных наук. М., 1977, էջ 18:

¹⁰ Տե՛ս Вишев И. В. На пути к практическому бессмертию. М., 2002, էջ 126:

հոգևոր անմահության մասին է, ինչպես խոստանում է կրոնը, այլ հենց մարմնական անմահության մասին է, անմահություն է ոչ թե «այնտեղ ու հետո», այլ «այստեղ ու հիմա». հանգամանք, ինչը հիմնովին փոխում է կյանքի ավանդական ըմբռնումը: Ավելին, այս դեպքում հարց է ծագում, թե ինչպես հարաբերակցել «կիրեոնետիկական անմահությունը» «հոգու անմահության» գաղափարի հետ, եթե հաշվի առնենք նաև, որ ֆիզիկական անմահության հասած մարդը զուրկ է կյանքի իմաստից և մարդկային այնպիսի որակներից, ինչպիսիք են հույսը, սերը, տառապանքը, հոգսը և այլն:

Եթե հաշվի առնենք, որ մահկանացու լինելը մարդկային կեցության կարևոր գոյաբանական բնութագրերից է, ապա, հավանաբար, կարելի է հասկանալ այն հեղինակների մտահոգության շարժառիթները, ովքեր «կիրեոնետիկական անմահության» գաղափարը դիտարկում են որպես մարդու հանդեպ «տեսական ցեղասպանություն»¹¹, քանի որ կեցության ամեն մի ձև որոշակի հատկանիշների հավաքածու է, և այն խախտելու դեպքում մենք արդեն գործ կունենանք այլ կեցության հետ: Թերևս այդպես է, քանի որ գոյություն ունեն որոշակի բնական սահմաններ, որոնք մարդը չի կարող անցնել չվտանգելով իր մարդկային էությունը: Մյուս կողմից, սակայն, մահկանացու լինելը մարդկային գոյության գոյաբանական սահմանափակության էմպիրիկ դրսևորումներից է, և մարդու անդրանցական էության մեջ արդեն իսկ ներդրված է ամեն կարգի սահմանների ու սահմանափակումների հաղթահարման ներունակությունը, ինչից զրկվելու դեպքում նա կարող է կրկին վերադառնալ իր ապաստոցիալական, կենդանական ակունքներին: «Տեսական ցեղասպանության» մտահոգությունը փարատելու կամ հաստատելու համար հավանաբար պետք է պարզել ու հասկանալ՝ արդյո՞ք մարմինը տեխնիկական սարքերով համալրված, մարմնի «ծերացած» օրգանները արհեստական համարժեքներով փոխարինված և այդ կերպ «կիրեոնետիկական անմահության» հասած կամ, պատկերավոր ասած, **ապակենսաբանականացված մարդը** իրոք կզրկվի գոյաբանական հիմունքներից: Նաև պետք է հասկանալ՝ արդյո՞ք կիրեոնետիկական անմահության հասնելու բոլոր տարբերակներում մարդու ապակենսաբանականացումն ու ապագոյաբանականացումը համարժեք նույնականություններ են: Խնդիրն այն է, որ, օրինակ, մարդու տեխնոլոգիական անմահության իրագործման կիրեոնետիկական վարկածի համաձայն՝ մարդկային մարմնի «ծերացած» օրգանները կարելի է փոխարինել արհեստական համարժեքներով, ինչից բոլորովին էլ չի հետևում, թե ապակենսաբանականացված մարդը նաև ապագոյաբանականացված մարդ է: Բայց գոյություն ունի նաև ֆիզիկական անմահության հասնելու մեկ այլ վարկած, ըստ որի ենթադրվում է, որ մարդկային գիտակցությունը կարելի է թվայնացնել և տեղափոխել վիրտուալ աշխարհ,

¹¹ См. у Кутырев В. А. *Философия трансгуманизма*. Нижний Новгород, 2010, էջ 9:

որտեղ նրա գոյությունը կարող է վտանգել միայն վիրտուալ աշխարհի գործառնությունն ապահովող սերվերների հոսանքազրկումը: Այս դեպքում արդեն կարելի է համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր կարծում են, որ այդպիսի ապակենսաբանականացման արդյունքում մարդը կարող է զրկվել նաև գոյաբանական հիմունքներից¹², քանի որ բնության սկսած էվոյուցիան շարունակող տեխնիկան ավելի կատարյալ մարդկանց համար կստեղծի ապագոյաբանական ու վիրտուալ մի կատարյալ աշխարհ, որտեղ երբեմնի կենսաբանական հիմունքներ ունեցող մարդը կհասնի մի վիճակի, երբ վերջնականապես կհրաժարվի իր մարմնից և կապրի համակարգչային ցանցերում ոչ թե այլևս որպես սոցիալական էակ, այլ որպես տեղեկատվական կառուցվածք: Եվ այնժամ՝ դասական սոցիալականությանը ներքնորեն բնորոշ բարոյական համատեքստի նման այլակերպումների արդյունքում մարդու կյանքի պատմությունը կլինի ոչ թե այն մասին, թե նա ինչու և ինչպես է մահանում ներսից, այլ այն մասին, թե ինչու և ինչպես է մահանում դրսից¹³, և թե ինչու և ինչպես իր իսկ կամքով հրաժարվեց սոցիալական գոյաբանության նախագծից ու կիրեռնետիկական անմահության հասնելու ճանապարհին դարձավ սոսկ ապակենսաբանական միավոր մի աշխարհում, որը նաև զուրկ է հոգևոր և բարոյական հիմունքներից:

Հայտնի իրողություն է, որ մարդու բնական հիմունքներից մեկը իռացիոնալությունն է, այսպես կոչված՝ «դիոնիսյան ազդակը», որի դերն ու ակտիվությունը հետարդիականության մեր աշխարհում չենք կարող անտեսել հենց միայն այն պատճառով, որ աշխարհն այլևս հստակ սահմանված միատարր և միասեռ սոցիալականություն չէ և այլևս չունի սրբազան կարգին ենթակա կանխորոշված ընթացք: Նրանում «դիոնիսյան ազդակից» սնվող էներգիան պարզապես կազմալուծում է սոցիալականի գործառնության բնականոն ընթացքը, ինչի արդյունքում բուն իրականությանը զուգահեռ ձևավորվում ու գործում է կեղծանմանակումների մեկ այլ իրականություն, որտեղ գոյության կենտրոնական դեմքը ոչ թե «այստեղ ու հիմա» ապրող գոյաբանական, հոգևոր ու բարոյական սպառնալիքներին (մահ, ճակատագիր, հոգս, մեղք և այլն) դիմակայող երբեմնի կենսաբանական մարդն է, այլ «այնտեղ ու հետո» ապրող կիրորգի հավակնություններ ունեցող մարդու այն նոր տեսակը, ով հրաժարվել է մարդկային և կեցութենականի էկզիստենցիալ միասնությունից և ոչ միայն **ներքնապես է դատարկվել** ու դարձել ապակենսաբանական հորինվածք, այլև **կեցութենական իմաստով**, քանի որ վերածվել է **«անմարդաբնակ»**՝ մարդկային էկզիստենցիալ հոգսերից, պահանջումներից, մարմնական թերություններից ու հիվանդություններից ձերբազատված սուբյեկտի:

¹² Տե՛ս **Федюлина Е. В.** Идея технологического бессмертия человек а в философии постгуманизма // Вестник Воронежского государственного университета. Серия: Философия, № 4 (38), 2020, էջ 85:

¹³ Տե՛ս **Морено Я.** Социометрия: Экспериментальный метод и наука об обществе. М., 2004, էջ 320:

Մարդկանց սոցիոմշակութային ընդհանրական ինքնության համատեքստը տվյալ սոցիալական կենսաշխարհին բնորոշ համակեցություն կազմակերպող այն մշակույթն է, որի շրջանակներում մարդիկ ոչ միայն անձնական նպատակներով ու խնդիրներով ծանրաբեռնված եզակիություններ են, այլև միմյանց կեցությանը մասնակից ընդհանրություն¹⁴։ Բայց, ինչպես իրավացիորեն նկատում է Ջ. Բաումանը, հետարդիական իրողություններում թվային սիմուլյացիաները ստեղծել ու ստեղծում են փոխգործակցության այնպիսի նոր ձևաչափեր ու սոցիալական հստակ պատկանելություն չենթադրող կապերի սինթետիկ նոր տարբերակներ, որոնք իրենց «ապասոցիալական չեզոքությամբ» արմատապես տարբերվում են մարդկային համակեցության նախկին ձևերից։ Նախկինում մարդկանցով չբնակեցված այդ նոր աշխարհը դեռևս լիովին ապրված ու իմաստավորված չէ, քանի որ այստեղ անցյալի մշակույթը կյանքի ու համակեցության կազմակերպման համար այնքան էլ պիտանի չէ¹⁵, և պարզ չէ նաև, թե արդյոք կարող ենք նախկինի նման այն մեր տունը համարել, որտեղ մեզ բոլորը ճանաչում էին ու սիրում, և որտեղ մենք պաշտպանված էինք ու մշտապես սպասված։ Խոստովանենք, որ այս և նմանատիպ բազմաթիվ հարցեր ու տարակուսանքներ միանշանակ պատասխաններ չունեն, որովհետև էկզիստենցիալ մարդու մեր պատկերացումներով ու արժեքներով դժվար է չափել ու գնահատել այդ ամենից ձերբազատված մեկ այլ, ոչ էկզիստենցիալ ու ապակենսաբանականացված մարդու արարքը, որի մարմինը ոչ թե հիվանդանում, այլ ընդամենը վթարվում է, և որին ոչ թե բուժում են հիվանդանոցներում, այլ վերանորոգում տեխնիկական սպասարկման կայաններում։ Այս առումով պարզապես փաստենք, որ իրականում այնքան սարսափելի չէ այն մահը, երբ մեռնողը մարդն է, որքան այն անմահությունը, երբ ապրողն այլևս մարդը չէ։

Ի դեպ, տեխնիկական սարքավորումներով մարմինը վերանորոգած և կենսաբանական պակասությունները հաղթահարած մարդուն Ջ. Ֆրոյդն անվանում էր «աստված հենակների վրա», պրոթեզավորված մի անհասկանալի խառնուրդ¹⁶, ով կյանքի իմաստի կորստի գնով փորձում է հասնել հավերժության։ Խնդիրն այն է, որ թեև կյանքը մարդու տնօրինմանը տրված կեցության սահմանափակ ռեսուրս է, ինչին, բնականաբար, մարդը չի կարող համակերպվել, բայց կարևոր է հասկանալ, որ կյանքի արժեքն ու ապրվածի իմաստը մահով է չափվում, և հենց մահկանացու լինելու հանգամանքն է դիմավորում ու անձնավորում կյանքը՝ մարդու ապրումների ու տառապանքների ստորոգյալ դարձնելով բոլոր այն էկզիստենցիալ ապրումները, որոնք այնքան լարված ու գրավիչ են դարձնում աշխարհում մարդու գոյության դրաման¹⁷, առավել ևս,

¹⁴ Տե՛ս **Бергер П., Лукман Т.** Социальное конструирование реальности. М., 1995, էջ 212:

¹⁵ Տե՛ս **Бауман З.** Индивидуализированное общество. М., 2002, էջ 316:

¹⁶ Տե՛ս **Фрейд З.** Вопросы общества. Происхождение религии. М., 2008, էջ 222:

¹⁷ Տե՛ս **Է. Ա. Հարությունյան**, Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 50:

որ միայն մահկանացու լինելու պարագայում մարդը կարող է ունենալ անդրանցական նպատակներ ու ձգտումներ: Ինչպես ասում են, մահկանացու լինելը բնության դրվածքով կանխորոշված մարդու երկրային ճակատագիրն է, և, իբրև բնության մի մասնիկ, նա չի կարող հակադրվել նրան ու լինել ավելին, քան ամբողջն է: Անհրաժեշտ է անցնել մահվան միջով, կասեր Դերիդան, որպեսզի նրա էմպիրիկ մերժությունը վերածվի գոյաբանական հեռավորության: Մահվան էմպիրիկ մերժությունը գոյաբանական հեռավորության վերածելու և անգամ հոգևոր անմահության հասնելու հնարավորությունը քրիստոնեական պատկերացումներում բարոյական դժվարին փորձություններով անցնող մարդուն տրված **պայմանական շնորհ է**, քանի որ Աստծո նմանությամբ ու պատկերով ստեղծված նախադրյալին հավելվում է ինքնաձազդման, բարոյական դժվարին փորձություններով անցնելու և իր վերակերպարանավորմանն անձամբ մասնակցելու պայմանը: Այլ կերպ ասած՝ անմահությունը մարդուն տրված գոյաբանական հնարավորություն է, ինչի հավանականությունը ոչ կարելի է հաստատել, ոչ էլ՝ հերքել: Հավատի հարց է, և ինչպես Բորիսեն է ասում՝ կրոնի համար մեռնելն ավելի հեշտ է, քան այն կատարելապես ապրելը¹⁸: Մի բան պարզ է, սակայն, որ եթե նախորդ դարաշրջաններում երկրային անմահության խնդիրը գլխավորապես դիտարկվում էր որպես հոգևոր մշակույթի համատեքստում կենսաբանական հատկանիշներով օժտված մարդու բնական ինքնավիճակային հնարավոր հետևանք, ապա «կիրեռնետիկական անմահության» ժամանակակից ուտոպիստական նախագծերում խոսքը ոչ թե դասական իմաստով բնական մարդու մասին է, այլ ապակենսաբանականացվող մեխանիկական մի կազմավորման (հետմարդու), ով ցանկանում է ոչ թե անդրանցական, այլ հենց երկրային կյանքում, առանց բարոյական փորձությունների ենթարկվելու, հասնել ոչ թե հոգևոր, այլ մարմնական անմահության, և ով ոչ թե Աստծո, այլ հենց գիտական ու տեխնոլոգիական միջամտության շնորհիվ ցանկանում է այնպես փոխել իր մարմինն ու գիտակցությունը, որ մարմինը մնա ֆիզիկական, իսկ գիտակցությունը վիրտուալ աշխարհում:

Մեզ մտահոգող որևէ բան մեր ապագա ուրախության կամ դժբախտության գաղտնի սկիզբն է, որովհետև ապագան ոչ միայն կարող է լինել պատասխանատվություն ենթադրող նախագիծ, այլև ընդհանուր պատրանք կամ համախոհ մարդկանց համատեղ հայուցինացիա¹⁹: Այս առումով հիմա դժվար է ասել, թե մարդակենտրոն գոյաբանության մայրամուտն ավետող «առցանց մարդու» այդ նորակազմությանը ինչ ճակատագիր է սպասվում:

¹⁸ Տե՛ս **Ի. Լ. Բորիսեն**, Երկու արքաներն ու երկու լաբիրինթոսները, Եր., 1992, էջ 165:

¹⁹ Տե՛ս **Braidotti R.** The Posthuman. Cambridge, UK: Polity Press, 2013, էջ 185:

ОВСАННА НАГАПЕТАН – *Закат антропоцентрической онтологии: постбиологический человек* . – В результате непропорционального развития творческих способностей человека и духовно-нравственного прогресса человечества нравственный контекст современной человеческой жизни начал изнашиваться и ссыхаться, как «шагреновая кожа». Проблема в том, что наука и новейшие технологические достижения эпохи постмодерна не только принципиально изменили и меняют некогда объективные основы онтологического порядка, но и сущность, природу человека, не только его тело, но и его нравственные представления, духовный внутренний мир в целом. Этот новый тип человека больше не является телесной единичностью, поскольку эта смесь биологических и технических органов (киборг), модифицированная на генетическом уровне и представляющая собой сверхчеловека нашего времени, больше не выражает сущность естественного человека (самость) и превращается в технически заменяемое образование.

Более того, в нашем потребительском мире, нацеленном на удовлетворение ненасытных материальных потребностей, человек больше ценится и осмысливается с точки зрения «эффективности» в содействии экономическому процветанию. Неоспоримая и тревожная реальность, которая требует нового понимания процесса и последствий трансформации констант (социальности, морали, смысла жизни, совершенства, человечности), воплощающих структуру духовного контекста социальной онтологии человека.

Ключевые слова: *дебиологизация, техногенное бытие, «смерть социального», сверхчеловек, кибернетическое бессмертие, трансгуманизм, постчеловек.*

OVSANNA NAHAPETYAN – *The Sunset of Anthropocentric Ontology: Post-Biological Man* . – As a result of the disproportionate development of human creative abilities and the spiritual and moral progress of humanity, the moral context of modern human life has begun to wear out and shrink like “shag leather”. The problem is that the science and the latest technological achievements of the era of postmodernity have not only fundamentally changed (and are changing) the objective foundations of the once ontological order of human life, but also the essence and nature of the human being, both in his body and moral perceptions, and spiritual inner world in general. This new type of man is no longer a bodily singularity, since this mixture of biological and technical organs (cyborg), modified at the genetic level and representing the superman of our time, no longer expresses the essence of the natural man (the self) and is transformed into a technically replaceable formation.

Moreover, in our consumer world that is aimed at satisfying insatiable material needs, men, henceforth, are valued from the perspective of “efficiency” in contributing to economic prosperity. This is an undeniably worrying reality, which requires a new understanding of the process and consequences of the transformations of the constants (sociality, morality, the meaning of life, perfection, humanity) that embody the structure of the spiritual context of human social ontology.

Key words: *debiologicalization, technogenic existence, “death of the social”, superman, cybernetic immortality, transhumanism, posthuman.*

Գրականության ցանկ

- Բորիսեն Խ. Լ., Երկու արքաներն ու երկու լաբիրինթոսները: Երևան, «Ապոլոն», 1992
 Հարությունյան Էդ. Ա., Մարդկային կեցության այլակերպումները: Երևան, ԵՊՀ, 2018
 Бауман З., Индивидуализированное общество. Москва, «Логос», 2005
 Бергер П., Лукман Т., Социальное конструирование реальности. Москва, «Медиум», 1995
 Вишев И. В., На пути к практическому бессмертию. Москва, МЗ-Пресс, 2002
 Гуревич П. С., Феномен деантропологизации человека // Вопросы философии, 2009, № 3

- Делез Ж.**, Тысяча плато: Капитализм и шизофрения. Москва, «Астрель», 2010
- Дубровский Д. И.**, Человек и компьютер: новая реальность // **Дубровский Д. И.** Сознание, мозг, искусственный интеллект: Сб. статей. Москва, Стратегия-Центр, 2007
- Кожев А.**, Диалектика Реального и феноменологический метод у Гегеля. В кн. Идея смерти в философии Гегеля. Москва, «Логос», 1998
- Кутырев В. А.**, Философия трансгуманизма. Нижний Новгород, Нижегородский университет, 2010
- Морено Я.**, Социометрия: Экспериментальный метод и наука об обществе. Москва, Академ. Проект, 2004
- Сент-Экзюпери А.**, Военные записки. 1939-1944. Москва, Прогресс, 1986
- Федотов Г. П.**, Судьба и грехи России. Избранные статьи по философии русской истории и культуры. СПб., София, 1997, т. 1
- Федюлина Е. В.**, Идея технологического бессмертия человек а в философии постгуманизма // Вестник Воронежского государственного университета. Серия: Философия, № 4 (38), 2020
- Фрейд З.**, Вопросы общества. Происхождение религии. Москва, «ООО Фирма СТД», 2008
- Фуко М.**, Слова и вещи. Археология гуманитарных наук. Москва, «Прогресс», 1977
- Braidotti R.**, The Posthuman. Cambridge, UK: Polity Press, 2013
- Jünger, F. G.**, Die Perfektion der Technik. Maschine und Eigentum. Frankfurt am Main, 1949
- Julian Huxley.** In New Bottles for New Wine. London, 1957

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԵՏՃԵՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԼԻԼԻԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ 

Երևանի պետական համալսարան

Հետճշմարտության ժամանակաշրջանը զգալի խոչընդոտներ է ստեղծում հանրային ոլորտում անհատների ազատ և ինքնավար մտածողության հնարավորության, տեղեկացված որոշումների կայացման տեսանկյունից: Հողվածում հեղինակը, հիմնվելով 18-րդ դարի գերմանացի փիլիսոփա Իմանուել Կանտի՝ բանականության հանրային գործադրման գաղափարի վրա, նկատում է, որ լուսավորական արժեքներից նահանջելը վտանգում է հանրային ռացիոնալ դիսկուրսի և ժողովրդավարության ապագան: Ժամանակակից իրականության մեջ բանականության հանրային գործադրման կանոնային պահանջը կամ իդեալը բխվում է մի քանի նշանակալի մարտահրավերների, որոնք լուսավորական «ընդհանուր պատկերացումներից» կամ տեսլականից մեզ հետ են կանգնեցնում կամ առնվազն շեղում են: Այս հողվածում անդրադարձ կարվի դրանցից առավել հրատապներին՝ թյուրտեղեկատվություն (misinformation) և ապատեղեկատվություն (disinformation), սցիալական մեղիայի այգորիթմներ և արձագանքի խցիկներ, հուզական մանիպուլյացիա և պոպուլիզմ: Թվարկված գործոններից յուրաքանչյուրն իր հերթին խաթարում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ են անհատներին հանրային ոլորտում իրենց բանականությունն ազատ և ինքնուրույն գործադրելու համար: Այնուամենայնիվ, կրթության նպատակների վերանայման, ավանդական ինստիտուտների նկատմամբ վստահության վերականգնման, թվային տեխնոլոգիաների շուրջ ավելի մտածված ռազմավարությունների կիրառման, հանրային ճշմարտությունների վերակառուցման «մեծ» քաղաքականության միջոցով դեռևս հնարավոր է ազատ քննարկման և ժողովրդավարական ներգրավվածության համար տարածքներ ստեղծել՝ խթանելով ինքնավար մտածողությունն այսօրվա աշխարհում:

* **Լիլիա Խաչատրյան** – ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասպիրանտ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Лилия Хачатрян – Аспирант кафедры истории, теории и логики философии ЕГУ, младший научный сотрудник Института философии, социологии и права НАН РА

Lilia Khachatryan – PhD student at YSU Chair of History, Theory and Logic of Philosophy, Yerevan State University, junior researcher at the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

Էլ. փոստ lilia.khachatryan@ysu.am <https://orcid.org/0009-0000-1607-2496>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 03.02.2025

Գրախոսվել է՝ 08.02.2025

Հաստատվել է՝ 14.03.2025

© The Author(s) 2025

Բանալի բառեր - հետճշմարտություն, Լուսավորականություն, Բ. Կանտ, ռացիոնալ դիսկուրս, ապատեղեկատվություն, թյուրտեղեկատվություն

Երբ Օքսֆորդի բառարանները 2016 թվականին հայտարարեցին, որ տարվա բառ է ճանաչվել «հետճշմարտություն»-ը, հանրության լայն շրջանակում դա ընկալվեց որպես Լուսավորականության գաղափարները վերջնականապես փլուզվելու ազդանշան, մասնավորապես՝ որ մենք այլևս չեն վստահում մարդկային բանականությանը, ռացիոնալ քննարկում վարելու մեր ունակությանը և լիովին համոզվել ենք, որ ճշմարտությունը մեզ երբևէ չի դարձնելու ազատ ու երջանիկ: Ընդ որում, բանականությունից կամ ռացիոնալ քննարկումներից հրաժարվելը գործնականում ընկալվում է նաև որպես հրաժարում համակեցության մեր ընտրած ձևաչափից՝ ժողովրդավարությունից, քանի որ այս դեպքում դժվար է պատկերացնել, թե ինչպես է հնարավոր, որ մարդիկ կարողանան մտածել միասին, հանրային քննարկումներ ունենալ և ողջամիտ որոշումներ կայացնել հասարակության և համայն մարդկության համար էական ու կարևոր հարցերի շուրջ:

Ռացիոնալ դիսկուրսի և ճշմարտության նշանակությունը ժամանակակից աշխարհում դարձել է վիճարկելի ու վերածվել է հրատապ մտահոգության առկա բազմաթիվ խնդիրների համապատկերին՝ ներառյալ հասարակությունների բևեռացումը, գիտության և ավանդական ինստիտուտների հեղինակության անկումը, ռացիոնալության և ժողովրդավարական արժեքների հանդեպ հավատի խարխիլման գործընթացները: Այսպես կոչված հետճշմարտության ժամանակաշրջանում փաստերն ու ճշմարտությունը շարունակաբար փոխարինվում են անհատական համոզմունքներով, իսկ զգացմունքները ձեռք են բերում ապացույցների կշիռ: Արդյունքում, հանրային քննարկումներում կամ հասարակական կարծիքի ձևավորման գործընթացում փաստերն անընդհատ վիճարկվում են, և բանականությունը լռեցվում է հուզական հոեոտորաբանությամբ¹: Հետճշմարտության կողմնակիցները պնդում են, որ մենք ներկայումս ապրում ենք մի աշխարհում, որտեղ մարդիկ դատում և գործում են՝ հիմնվելով իրենց զգացմունքների, այլ ոչ թե փաստերի և փորձի վրա: Այս առումով հետճշմարտության գաղափարները կարելի է համարել պոստմոդեռնիստական մտածողության և աշխարհընկալման տրամաբանական շարունակություն: Պոստմոդեռնիստների կողմից օբյեկտիվ ճշմարտության մերժումը հանգեցրեց անհատական հույզերի և սուբյեկտիվության՝ որպես այլընտրանքների ապավինմանը՝ ստեղծելով հասարակական և մշակութային մի մթնոլորտ, որը բնութագրվում է ճշմարտության և գիտելիքի նկատմամբ թերահավատությամբ, ինտելեկտուալ հեղինակությունների անտեսմամբ²: Վերջիններս իրենց հերթին լուրջ խոչընդոտներ են ստեղծում ժողովրդավարական արժեքների

¹ Տե՛ս **McIntyre, L.** Post-Truth, Cambridge, The MIT Press, 2018, էջ 1-16:

² Տե՛ս, օրինակ՝ **Bourdieu P.** The Logic of Practice, Stanford, Stanford University Press, 1990:

կայացման ճանապարհին և պարարտ հող՝ ավտորիտար ու պոպուլիստական քաղաքականության համար: Ինչպես պնդում է ամերիկյան փիլիսոփա և հանրային ինտելեկտուալ Հաննա Արենդտը՝ «... տոտալիտար կառավարման իդեալական սուբյեկտը ոչ թե համոզված նացիստն է կամ համոզված կոմունիստը, այլ մարդիկ, որոնց համար փաստի և հորինվածքի, ... ճշմարիտի և կեղծի միջև տարբերություն ... այլևս գոյություն չունի»³:

Հետճշմարտության կողմնակիցները և վերլուծաբանները հայտարարում են, որ Լուսավորականության նախագիծը անվերադարձ ձախողվել է, որ հանրային ոլորտից այլևս դուրս են մղվել ճշմարտությունը, հանրային ռացիոնալ քննարկումները կամ այլ խոսքով ասած՝ «բանականության հանրային գործադրումը»⁴: Սկիզբ առնելով Լուսավորականությունից՝ հանրային բանականության գաղափարը ժառանգվել և կարևորվել է ժամանակակից բարոյական և քաղաքական փիլիսոփայության ակնառու մտածողների կողմից, այդ թվում՝ Ջոն Ռոլսի, Յուրգեն Հաբերմասի և այլոց: Բանականության հանրային գործադրումը կամ հանրային բանականությունը իդեալ է կամ չափանիշ, որը պահանջում է, որ մեր կյանքը կարգավորող բարոյական կամ քաղաքական նորմերը արդարացված կամ ընդունելի լինեն այն բոլոր մարդկանց կողմից, որոնց վրա դրանք տարածվում են⁵: Հենվելով ազատ և հավասար անհատների մասին հայեցակարգի վրա, որը ժողովրդավարական հասարակարգի գաղափարական հիմքն է, հանրային բանականության կողմնակիցները այն համարում են բազմակարծության պայմաններում մարդկանց միջև ռացիոնալ դիսկուրսի հնարավորության երաշխիք:

«Բանականության հանրային գործադրում» (Vernunft in allen Stücken öffentlichen Gebrauch) արտահայտությունն օգտագործվել է գերմանացի փիլիսոփա Իմանուել Կանտի 1784 թվականին լույս տեսած խմբագրական հոդվածում, որտեղ նա փորձում է պատասխանել «ի՞նչ է լուսավորությունը» հարցին: Հոդվածում, որն այդպես էլ վերնագրված է «Ի՞նչ է լուսավորությունը», Կանտը նկարագրում է, որ լուսավորությունը մարդու՝ անչափահասության վիճակից դուրս գալն է, իսկ դրա համար նա պետք է կարողանա օգտագործել իր բանականությունը, միտքը՝ ինքնուրույն, առանց ուրիշների ուղղորդման: Անչափահասությունը հենց այն վիճակն է, երբ մարդը դեռևս անկարող է օգտվելու սեփական բանականությունից՝ առանց ուրիշների ուղղորդման: «Sapere aude! Քաջություն ունեցի՛ր օգտվելու սեփական խելքից»՝ այսպիսին է հետևաբար լուսավորական կարգախոսը: Ապա նա ավելացնում է, որ նկատի ունի այն, որ

³ **Arendt H.**, The Origins of Totalitarianism, New York: Harcourt, Brace, 1951, p. 474.

⁴ Տե՛ս, օրինակ՝ **Bauman, Z.** Liquid Modernity, 2000; **Fuller, S.**, Post-Truth: Knowledge as a Power Game, 2018:

⁵ Տե՛ս **Quong, J.** Public Reason, Stanford Encyclopedia of Philosophy, 2022 (հղում՝ <https://plato.stanford.edu/entries/public-reason/>):

մենք պետք է ազատորեն և հրապարակավ գործադրենք սեփական բանականությունը՝ նպաստելով մեր բոլորի շարունակական լուսավորությանը⁶:

Ըստ Կանտի՝ մենք մեր բանականությունը կարող ենք գործադրել կամ օգտագործել երկու ձևով՝ մասնավոր և հանրային: Սեփական բանականության հանրային գործադրումն իրականացվում է անհատի կողմից, օրինակ՝ գիտնականի, հանրության կամ աշխարհի առաջ, իսկ մասնավոր օգտագործումն իրականացվում է անհատի կողմից իր զբաղեցրած դիրքում, պաշտոնում, ծառայությունում: Բանականության մասնավոր գործադրման դեպքում մարդը ազատ չէ, քանի որ ենթարկվում է ինչ-որ քաղաքացիական կամ քաղաքական կառույցի հեղինակությանը, որն իր հերթին կարիք ունի հանրային արդարացման: Օրինակ՝ զինվորական սպան, քահանան, ամեն անգամ հանդես գալով որպես համապատասխան կառույցների պաշտոնական ներկայացուցիչներ, մասնավոր կերպով են գործադրում իրենց մտածողությունը, քանի որ նրանց դատողությունները հենվում են այնպիսի աղբյուրների կամ հեղինակությունների վրա, ինչպիսիք են եկեղեցին և պետությունը (որոնց հեղինակությունն ինքնին կարիք ունի արդարացման): Բանականության հանրային գործադրումը ենթադրում է ազատ լինել ամեն տեսակի արտաքին հեղինակություններից, հենվել միայն ինքն իր վրա և ազատորեն ու հրապարակավ կիսել բոլորի հետ աշխատանքային, քաղաքացիական կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ մտքեր ու մտահոգություններ:

Բանականության հանրային գործադրումը, ըստ Էոյսյան, հաղորդակցություն է այլ ռացիոնալ էակների հետ, որոնք էլ փոխադարձաբար հաղորդակցվում են մեզ հետ: Ըստ Կանտի՝ մտքի ազատությունն անհնարին է առանց հաղորդակցության ազատության, այն է՝ հրապարակավ մտքերն արտահայտելու ազատության: Կանտը գրում է. «Թեև ասվում է, որ իշխանությունը կարող է իլել խոսելու կամ գրելու ազատությունը, բայց ոչ մտածելու ազատությունը: Սակայն որքան և որքանով ճիշտ մենք կկարողանայինք մտածել, եթե չմտածեինք համայնքում՝ այն մարդկանցով, որոնց հետ մտքեր ենք փոխանակում»⁷: Բանականությունը, մարդու մտավոր կյանքը, ըստ Կանտի, բնույթով հանրային են: Այս գաղափարի վրա էլ, ըստ Էոյսյան, կառուցվել են մոդեռնի ժողովրդավարական և լիբերալ քաղաքական տեսությունները: Հանրային ռացիոնալ քննարկման և արդարացման գաղափարը նշանակալի տեղ է զբաղեցնում ժամանակակից բարոյական, քաղաքական փիլիսոփայության և իրավաբանություն մեջ: Այսպիսով, մարդկային մտածողությունը հնարավոր է միայն այնքանով, որքանով այն ներգրավված է ազատ և հանրային դիսկուրսի մեջ:

Կանտն ազատ մտածողությունը հակադրում է ազատամտությանը: Ազատամտությունը բանականության նկատմամբ անհավատություն է կամ

⁶ Տե՛ս Կանտ Ի. Сочинения в шести томах. Т. 6, М., 1966, էջ 25:

⁷ Կանտ Ի. Сочинения. В 8 т. Т. 8. М.: Чоро, 1994, с. 102-103.

սկզբունք, որը չի ճանաչում ոչ մի պարտք, ամբարտավանություն է, որը վերջիվերջո կործանելու է ինքն իրեն⁸: Կանտյան այս տարբերակումն առանձնակի կարևորություն է ստանում ներկայումս՝ հաշվի առնելով այն, թե ժամանակակից աշխարհում ինչպես են մեկնաբանվում և գործում հանրային ոլորտի հիմնարար սկզբունքները՝ խոսքի և արտահայտման ազատությունները, և դրա արդյունքում ռացիոնալ դիսկուրսի համար ինչպիսի վտանգներ են առաջացել: Մեր մտածողությունը պետք է լինի այնպիսին, որ ցանկացած մարդ հնարավորություն ունենա հետևելու դրան կամ համաձայնելու: Եթե մենք ձգտում ենք հասնել միայն լոկալ կամ միայն համախոհների լսարանի, արդյունքը կլինի ոչ ավելին, քան բանականության մասնավոր գործադրումը:

Հետճշմարտության ժամանակաշրջանը զգալիորեն խոչընդոտում է հանրային ոլորտում ազատ և ինքնուրույն մտածողությունը: Ժամանակակից աշխարհի բնութագրերից մեկը ճշմարտության էրոզիան է և հանրային ոլորտի աղավաղվածությունն այլընտրանքային փաստերով կամ իրականություններով, դավադրապաշտական տեսություններով և կեղծ տեղեկությամբ⁹: Այսօրվա իրականության մեջ կանտյան ազատ և ինքնավար մտածողությունը բախվում է մի քանի նշանակալի մարտահրավերների, որոնք պայմանավորված են լուսավորական գաղափարներից կամ տեսլականից հետ կանգնելով կամ առնվազն շեղվելով: Այստեղ կքննարկենք առավել հրատապները՝ թյուրտեղեկատվություն և ապատեղեկատվություն, սոցիալական մեդիայի ազդրիթմներ և արձագանքի խցիկներ, էմոցիոնալ մանիպուլյացիա և պոպուլիզմ: Թվարկված գործոններից յուրաքանչյուրն իր հերթին խաթարում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ են անհատներին հանրային ոլորտում իրենց բանականությունն ազատ և ինքնուրույն գործադրելու համար:

Ակնհայտ է, որ այսօրվա ամենահրատապ մարտահրավերներից մեկը թյուրտեղեկատվության և ապատեղեկատվության մեծ ծավալն է, ինչը լրջորեն խեղաթյուրում է իրականության մասին անհատների ըմբռնումը, խաթարում է նրանց ազատ և ինքնուրույն մտածելու, ռացիոնալ դիսկուրսի մեջ ներգրավելու ունակությունը: Թյուրտեղեկատվությունը վերաբերում է ոչ ճշգրիտ տեղեկության տարածմանը, որը սովորաբար տեղի է ունենում առանց վնասակար մտադրության կամ չարակամության, մինչդեռ ապատեղեկատվությունը կեղծ լուրերի տարածումն է դիտավորյալ, մարդկանց խաբելու մտադրությամբ: Երկու երևույթներն էլ սրվել են թվային դարաշրջանում, որտեղ տեղեկությոն տարածվում է այնքան արագ և լայնորեն, որ դրա շատ քիչ մասն է ստուգվում:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 104:

⁹ Տե՛ս, օրինակ՝ **Lewandowsky, S., Ecker, U., & Cook, J.** Beyond Misinformation: Understanding and Coping with the Post-Truth Era. *Journal of Applied Research in Memory and Cognition*, 6(4), 2017, էջ 353-369:

Թվային տեխնոլոգիաների աճը և սոցիալական մեդիա հարթակների առաջացումն էքսպոնենցիալ մեծացրել են ոչ ճշգրիտ և կեղծ բովանդակության տարածման և՛ արագությունը, և՛ ծավալը՝ վերածելով այդ հարթակները «ճշմարտությունից զուրկ» հանրային տարածքների՝ առանձին սոցիալական խմբերի կամ խավերի թիրախավորելու համար¹⁰: Ապատեղեկատվությունը հաճախ կարող է շարունակել ազդել մարդկանց մտածողության վրա նույնիսկ այն բանից հետո, երբ այն հերքվում է, ու մարդիկ ընդունում են, որ նախկինում սխալ տեղեկույթի են հավատացել: Սա հայտնի է որպես «շարունակական ազդեցության էֆեկտ», որի դեպքում հերքված տեղեկույթը շարունակում է ազդել մարդկանց գնահատականների և որոշումների վրա, նրանք շարունակում են անգիտակցաբար հիմնավորել իրենց պնդումները՝ հենվելով կեղծ նախադրյալների վրա¹¹: Ավելին, առցանց հասանելի տեղեկության զգալի քանակությունը ստեղծում է նաև մի երևույթ, որը հայտնի է որպես «տեղեկատվական գերբեռնվածություն», երբ օգտատերերը, այսպես ասած, «ոմբակոծվում են» այնպիսի ծավալի բովանդակությամբ, որը նրանք ի վիճակի չեն վերլուծելու և գնահատելու: Տեղեկատվական գերբեռնվածությունը մարդկանց իմացական կարողությունների տեսանկյունից դժվար մարտահրավեր է ստեղծում՝ հանգեցնելով մտավոր դյուրանցումների, հաստատման կողմնակալության և ապատեղեկատվության նկատմամբ դյուրընկալության¹²:

Կեղծ լուրերի տարածման արագության և ծավալի պատճառն այն է, որ դրանք նախատեսված են զգացմունքային արձագանքներ առաջացնելու համար¹³: Կեղծ լուրերը առաջացնում են վախ, զզվանք և զարմանք, որոնք ուշադրություն են գրավում, և ավելի հավանական է, որ կպատճենվեն ու կտարածվեն¹⁴: Բացի այն բանից, որ մարդիկ հակված են «գրավիչ» լուրեր տարածելու, նրանք վարքը նաև հետևանք է թվային տեխնոլոգիաների ռազմավարությունների, օրինակ՝ տարատեսակ ալգորիթմների կիրառման: Սոցիալական մեդիա հարթակներն իրենց ալգորիթմների միջոցով ստեղծում են «արձագանքի խցիկներ»՝ տարածքներ, որտեղ մարդիկ տեսնում են միայն այն, ինչը համապատասխանում է իրենց տեսակետներին, և սպառում են միայն այնպիսի բո-

¹⁰ Տե՛ս **Ingrid Foss Ballo, Nora S. Vaage**. Post-Truth Imaginations. 1st Edition, Routledge, 2021, էջ 138-160:

¹¹ Տե՛ս, օրինակ՝ **Walter, N. & Tukachinsky, R.** A meta-analytic examination of the continued influence of misinformation in the face of correction: how powerful is it, why does it happen, and how to stop it? Commun. Res. 47, 2020, էջ 155-177:

¹² Տե՛ս, օրինակ՝ **Eppler, M. J., & Mengis, J.** The concept of information overload: A review of literature from organization science, accounting, marketing, MIS, and related disciplines. The Information Society, 20(5), 2004, էջ 325-344:

¹³ Տե՛ս **Vosoughi, S., Roy, D., & Aral, S.** The spread of true and false news online. Science, 359 (6380), 2018, էջ 1146-1151:

¹⁴ Տե՛ս նույն տեղը: Հետազոտությունը իրականացվել է 2016-2017 թթ. Թվիթերի՝ ստուգված ճշմարիտ և կեղծ հաղորդագրությունների շրջանակում:

վանդակություն, որը համահունչ է իրենց արդեն ձևավորված համոզմունքներին¹⁵: Արդյունքում, չկարողանալով հաղորդակցվել գաղափարների ավելի մեծ շուկայում, հանրային քննարկումը տեղի է ունենում թվային երևակայական համայնքում, որի պատճառով այն գնալով դառնում է ավելի պասիվ և իրականում չներգրավված հասարակական գործընթացներում, իսկ մարդիկ սկսում են ապրել հատվածական (ֆրագմենտայ) միջավայրում:

Հետձմարտության ժամանակաշրջանի մյուս առանձնահատկությունը հուզական մանիպուլյացիաների և պոպուլիզմի տարածվածությունն է: Քաղաքական տեսաբան Ուիլյամ Դեյվիսը պնդում է, որ հետձմարտության աշխարհում համատարած կերպով «զգացմունքները, այլ ոչ թե փաստերն են դառնում մարդկանց վարքագծի դրդիչներ»¹⁶: Քաղաքական գործիչները, հանրային դեմքերը և լրագրողները սովորաբար հենվում են հուզական կոչերի վրա, ինչպիսիք են վախը, գայրույթը և վրդովմունքը, որպեսզի մոբիլիզացնեն իրենց լսարանը: Հուզական հոսանքը, լինելով անմիջական և ուժեղ, հաճախ սովորում է իրականում դանդաղ ընթացող և մեծ կենտրոնացում պահանջող ինքնաանդրադարձող դատողականությունը¹⁷: Վերջերս իրականացված հետազոտություններից մեկի համաձայն պոպուլիստ քաղաքական գործիչներն ավելի շատ են շահում համացանցից և սոցիալական մեդիայից, քան մյուսները: Որպես հնարավոր պատճառ նշվում է սոցիալական մեդիային և պոպուլիզմին բնորոշ հաղորդակցման ձևերի միջև եղած ընդհանրությունները, օրինակ՝ ավելի կարճ, պարզ և ավելի հուզական հաղորդագրությունների նախընտրությունը¹⁸: Մյուս կողմից, մարդիկ հակված են պոպուլիստ քաղաքական գործիչներին համարելու ավելի պարզ, անկեղծ և ազնիվ, քան ավանդական քաղաքական գործիչներին¹⁹, իսկ սոցիալական մեդիան անմիջական և սերտ շփան հնարավորություն է տալիս թիրախային լսարանի հետ (օրինակ՝ ուղիղ միացումներ անել աշխատավայրից, խոհանոցից կամ ցանկացած այլ վայրից մտերմիկ և «թափանցիկ» շփումների համար): Սոցիալական մեդիան այսպիսով նպաստում է, որ պոպուլիստ քաղաքական գործիչները լայն զանգվածների մեջ թողնեն իսկական (առտենտիկ), ոչ ձևական և ինքնաբերաբար մարդու տպավորություն: Զգացմունքների վրա ազդելուն միտված այս քաղաքականությունը խաթարում է ռացիոնալ ամեն մի քննարկման հնարավորություն՝ դիմելով ոչ թե բանականությանը, այլ մարդկանց բնազդներին, որի հետևանքով էլ հասարակության մեջ աճում է բևեռացումը:

¹⁵ St' u **Pariser, E.** The Filter Bubble: How the New Personalized Web is Changing What We Read and How We Think. Penguin Press, 2011:

¹⁶ **Davies, W.** The Age of Post-Truth Politics. The New York Times, 2016.

¹⁷ St' u **Stanley, J.** How Fascism Works: The Politics of Us and Them. Random House, 2018:

¹⁸ St' u **Zhuravskaya, E., Petrova, M., Enikolopov, R.** Political Effects of the Internet and Social Media. Annual Review of Economics, Vol. 12, Issue 1, 2020, էջ 415 – 438:

¹⁹ St' u, օրինակ՝ **Enli, G., Rosenberg, L.T.** Trust in the Age of Social Media: Populist Politicians Seem More Authentic. Social Media + Society, 4(1), 2018:

Բևեռացված հասարակություններին բնորոշ է այն, որ մարդիկ ուղղակիորեն մերժում են հակառակ կարծիքները՝ անվանելով դրանք կողմնակալ կամ չարամիտ, քան թե ցուցաբերում են դրանք լսելու կամ քննարկելու պատրաստակամություն²⁰: Դրանով է պայմանավորված այն, որ այսօր առցանց հարթակներում քննարկումները շատ արագ վերածվում են ագրեսիվ և թշնամական խոսակցությունների, որը բացատրվում է նաև այդ հարթակներին բնորոշ անանունությամբ, դեմառդեմ շփման ու հետևանքների համար պատասխանատվության բացակայությամբ և այլն: Այդ բացասական կամ թշնամական քննարկումներն ընդունված է բնորոշել «ատելության խոսք» եզրույթով, որն ըստ էության մարդկանց լռեցնելու գործիք է՝ բաժանելով քննարկման կողմերին բևեռների՝ մերոնց (ընդունելիների) և նրանց (անընդունելիների): Ատելության խոսքը ժամանակակից ժողովրդավարական հասարակությունների համար խոսքի ազատության և մարդկանց լռեցնելու կամ գրաքննության միջև երկընտրանքի նոր մարտահրավեր է:

Ինչպես նշվեց վերևում, հետձշմարտության դարաշրջանի մյուս մարտահրավերը գիտության, գիտական գիտելիքի նկատմամբ անվստահության և սկեպտիցիզմի աճն է լայն հանրության շրջանում: Ըստ երևույթին, 20-րդ դարում գիտությունը ստանձնել էր հանրային կարևորություն ունեցող որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ վկայությունների ու հիմնավորումների մատակարարի դերը: Ըստ ամերիկացի փիլիսոփա Հ. Դագլասի՝ 20-րդ դարը կարելի է համարել «գիտական խորհրդատվության ծաղկման» ժամանակաշրջան, քանի որ քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում հասարակությունները մեծ հաշվով ապավինում էին գիտությանը: Ըստ այդմ գիտությունը եղել է ոչ միայն «ձշմարտություն որոնող», այլև սոցիալական և քաղաքական կյանքի ակտիվ մասնակից այն իմաստով, որ այն նաև ձգտել է ծառայել (օրինակ՝ հարցադրումների, հիմնախնդիրների, մեթոդների իր ընտրությամբ) այս կամ այն քաղաքական օրակարգին՝ տրամադրելով վերջիններիս աջակցող գիտական հիմնավորումներ: Արդյունքում, այս և մասնագիտական գրականության մեջ քննարկվող այլ խնդիրների պատճառով լայն հանրության շրջանում ստեղծվել է գիտության վերաբերյալ հակասական պատկեր, և գիտական գիտելիքի նկատմամբ հանրային վստահությունը անկում է ապրել: Ելնելով այն բանից, որ գիտական գործունեությունը չի կարող լինել ամբողջովին չեզոք, այլ անխուսափելիորեն առնչվում է սոցիալական, քաղաքական և բարոյական համատեքստին, Դագլասը եզրակացնում է, որ գիտության նկատմամբ հանրային վստահությունը կախված է այն բանից, թե որքանով են գիտնականները բաց և պատասխանատու իրենց աշխատանքի արդյունքների համար²¹: Այլ կերպ ասած՝ գիտության նկատմամբ հանրային վստահության վերականգնումը կախված է նրանից, թե որքանով է այն հասարակության

²⁰ St' u **Mason, L.** Uncivil Agreement: How Politics Became Our Identity. University of Chicago Press, 2018:

²¹ St' u **Douglas, H.** Science, Policy and the Value-Free Ideal. Pittsburg: University of Pittsburg Press, 2009:

կողմից ընկալվում որպես թափանցիկ, հաշվետվողական և պատասխանատու ոլորտ: Այսպիսով, գիտության շուրջը կուտակված հակասական և անորոշ հանրային պատկերացումների ամպերը կարելի է ցրել գիտական գիտելիքի իրական բնույթի և սահմանների մասին մարդկանց լուսաբանելու, կրթելու միջոցով²²:

Հետճշմարտության դարաշրջանի մարտահրավերներին հակազդելու հիմնարար միջոցներից է համարվում կրթությունը, քանի որ այդ մարտահրավերները անմիջականորեն կապված են մարդկանց մտածողության, գիտելիքների և արժեքային կողմնորոշումների հետ: Տեսաբանների շրջանում լուրջ մտահոգություններ կան, որ այսօրվա կրթությունը (որը քննարկվող թեմայի տեսանկյունից հույսը դնում է թվային և մեդիագրագիտության, ինչպես նաև քննադատական մտածողության զարգացման վրա՝ որպես մարդկանց մտածողությունը բարելավող հիմնական գործիքների) ի վիճակի չէ հաղթահարելու նոր աշխարհի մարտահրավերները: Ավելին, ամերիկացի հանրային ինտելեկտուալ Լ. Մաքինթայերը պնդում է, որ մեծ հաշվով այսօրվա կրթությունն է հետճշմարտության առաջացման աղբյուրներից մեկը: Նա գրում է. «Հետճշմարտության երևույթի ամենատխուր արմատներից մեկը կարծես թե սկիզբ է առնում քուլեջներից և համալսարաններից»²³, քանի որ այդտեղից են լայն հանրության մեջ տարածվում պոստմոդեռնիստական փիլիսոփայության գաղափարները: Ուստի անհրաժեշտություն է առաջացել վերանայելու կրթական առկա նպատակները և մշակելու կրթական հետազոտությունների նոր ուղղություններ՝ պատասխանելու համար այն հարցին, թե ինչպես կարող է կրթությունը մարդկանց աջակցել՝ արդյունավետորեն կշռադատելու և որոշումներ կայացնելու այսօրվա սոցիալական և քաղաքական իրադրությունում: Քննադատական մանկավարժության հիմնադիր, տեսաբան Հ. Ժիրուն նշում է, որ կրթությունը նոր լեզվի կարիք ունի՝ հասցեագրելու համար անգրագիտության նոր ձևերը, որոնք խթանում են սպառողականությունը, արժեզրկում են հարցադրումներ անելու և տեղեկացված որոշումներ կայացնելու մարդկանց ջանքերը, և որ ամենավտանգավորն է՝ գործիքներ են դառնում քաղաքական մանիպուլյացիաների համար²⁴: Կրթության նոր լեզվի կամ ավելի կենսունակ ռազմավարության ուղղությամբ տեսական որոնումները մասնագիտական գրականության մեջ հիմնականում առնչվում են երկու ոլորտների՝ իմացաբանական կրթության և գիտության ու տեխնոլոգիայի ուսումնասիրություններին²⁵: Իմացաբանա-

²² Տե՛ս **Lockie, S.** Post-Truth Politics and the Social Sciences. *Environmental Sociology* 3 (1), 2017, էջ 1-5:

²³ **McIntyre, L.** Post-Truth. Cambridge: MIT Press, 2018, p. 123.

²⁴ Տե՛ս **Peters, M.** at el. Post-Truth, fake news: viral modernity & higher education. Springer, 2018:

²⁵ Այստեղ խոսքը Science and technology studies (STS) -ի մասին է, որը հարաբերականորեն նոր ձևավորված միջառարկայական ոլորտ է և ուսումնասիրում է գիտության ու տեխնոլոգիայի առաջացումը, զարգացումը և հետևանքները պատմական, սոցիալական և մշակութային համատեքստում:

կան կրթության հրատապ խնդիրն է դառնում բարելավել մարդկանց իմացական կատարողականությունը (epistemic performance) և լուծել տարածված շփոթությունը կամ անհամաձայնությունը գիտելիքի, գիտության և դրանց նկատմամբ վստահության վերաբերյալ, մասնավորապես՝ հետևյալ երեք հարցերի՝ ի՞նչ է հայտնի, ինչպե՞ս իմանալ և ո՞ւմ վստահել՝ սահմանելով իմացական նոր նպատակներ, իդեալներ և հուսալի գործընթացներ²⁶: Ի լրումն իմացաբանական միջոցների՝ կարևորվում է նաև սոցիալական իմացաբանության և միջառարկայական փորձագիտական գիտելիքի դերը, որը վերաբերում է, այսպես կոչված, գիտության և տեխնոլոգիայի ուսումնասիրությունների ոլորտին: Համարվում է, որ պետք է մեծացնել վերջինիս ներգրավվածությունը և ազդեցությունը կրթության վրա, քանի որ այն, խորացնելով մեր իմացությունը գիտելիքի, մասնավորապես՝ գիտական գիտելիքի սոցիալական և կոլեկտիվ բնույթի վերաբերյալ, հարուստ ներուժ ունի՝ բացահայտելու և լուսաբանելու, թե ինչպես են կառուցվում և գործում հետճշմարտության ժամանակաշրջանին բնորոշ երևույթները և ռազմավարությունները²⁷:

Լուսավորականության մտածողները հանրային ոլորտը պատկերացնում էին որպես մի վայր, որտեղ անհատները կարող են ստուգել իրենց գաղափարները բաց երկխոսության միջոցով: Այսօրվա մասնատված և բևեռացված աշխարհում իրական, հարգալից և ռացիոնալ բանավեճի համար տարածքներ ստեղծելը հրատապ, բայց դժվար խնդիր է դարձել: Այս առումով մասնագիտական գրականության մեջ քննարկվում է հանրային ճշմարտությունների, ապագայի մասին ընդհանուր պատկերացումների վերաիմաստավորման և բարոյական նորմերի ու արժեքների նորոգման հանձնառության անհրաժեշտության հարցը, որն առաջնահերթորեն կապվում է քաղաքականության, գիտության և լրագրության դաշտի հետ: Այլ կերպ ասած՝ կրկին եկել են «մեծ քաղաքականության» ժամանակները, որ կարող են միավորել բոլորին՝ ներգրավելով նրանց հանրային ռացիոնալ դիսկուրսի մեջ²⁸: Դրան հասնելու համար նախևառաջ պետք է հաղթահարել պետական ինստիտուտների, գիտության և պրոֆեսիոնալ լրագրության նկատմամբ վերջին ժամանակներս տարածված հանրային անվստահությունը, ինչն անհրաժեշտ է հասարակության մեջ փաստահենք, ռացիոնալ հանրային դիսկուրս կառուցելու համար²⁹: Ակնհայտ է, որ ո՛չ քաղաքականությունը, ո՛չ գիտությունը և ո՛չ էլ լրագրությունը, որքան էլ կարճ կամ երկար պատմություն ունենան, երբևէ չեն եղել «առաքինի» կամ դրան շատ մոտ, չեն եղել զերծ կեղծիքներից և մանիպուլյացիաներից, սակայն

²⁶ Տե՛ս **Chinn, C. A., Barzilai, S., & Duncan, R. G.** Education for a “Post-Truth” World: New Directions for Research and Practice. *Educational Researcher*, 50(1), 2021, էջ 51:

²⁷ Տե՛ս **Valladares, L.** Post-Truth and Education. *Science & Education* vol. 31, 2022, էջ 1311–1337:

²⁸ Տե՛ս **Jananoff, S., & Simmet, H. R.** No funeral bells: Public reason in a ‘post-truth’ age. *Social Studies of Science*, 47(5), 2017, էջ 751-770:

²⁹ Տե՛ս **Oreskes, N., & Conway, E. M.** Merchants of Doubt: How a Handful of Scientists Obscured the Truth on Issues from Tobacco Smoke to Global Warming. Bloomsbury Press, 2010:

ակնհայտ է նաև, որ հանրային վստահությունը վերականգնելու համար այսօր այդ ոլորտներից պահանջվում է գործել ավելի մեծ թափանցիկությամբ և հաշվետվողականությամբ՝ սխալների և կեղծիքների համար ավելի մեծ պատասխանատվություն կրելով: Մարդիկ այսօր ընթերցում են ոչ միայն ոչ ճշգրիտ կամ կեղծ լուրերը, որոնք տարածվում են սոցիալական հարթակներում, այլև հետևում են ավանդական լրատվական կայքերին, ընթերցում են լրագրողական հոդվածներ, փորձում են գտնել ավելի վստահելի աղբյուրներ: Ուստի, եթե լրատվամիջոցներն ավելի մեծ պատասխանատվությամբ վերաբերվեն իրենց հրապարակումների փաստական հիմքին և վերլուծության խորությանը, ապա դա ճանապարհ կբացի մարդկանց համար նորոգելու վստահությունը պրոֆեսիոնալ լրագրության նկատմամբ՝ որպես հանրային կարծիքի ձևավորման գործընթացում կարևոր դերակատարի (միջնորդի): Լրագրությունը ոչ թե պետք է «հռչակի» ճշմարտություններ, այլ տրամադրի քննարկման համար անհրաժեշտ փաստարկները, որոնց շնորհիվ ևս ձևավորվում են հանրային ճշմարտությունները: Հակառակ դեպքում այն նպաստում է հասարակության բևեռացմանը՝ բաժանելով մարդկանց ըստ այն բանի, թե որ լրատվամիջոցներին են նրանք վստահում՝ որպես ճշմարտության աղբյուրների, և որոնց՝ ոչ³⁰: Ավելին, լրագրողներից, գիտական համայնքից և հանրային ինստիտուտներից պահանջվում է, որ նրանք ներդրում ունենան լայն հանրության մեջ հետճշմարտության մարտահրավերների մասին իրազեկվածությունը բարձրացնելու գործում, քանի որ բարձրացնելով մարդկանց իրազեկվածությունն այն մասին, թե ինչպես են մանիպուլյացիաները և ալգորիթմներն ազդում մարդկանց որոշումների վրա, ավելի քիչ հավանական է, որ նրանք դառնան դրանց կույր զոհը և պասիվորեն տրվեն վախ ու զայրույթ շահարկող պոպուլիստական հռետորաբանությանը³¹: Մյուս կողմից, հետազոտությունները ցույց են տվել, որ սենսացիոն, մանիպուլյատիվ բովանդակության նվազեցումը կամ շեշտադրման փոփոխությունը կարող է հանգեցնել ավելի ներառական և ռացիոնալ դիսկուրսի, ներառյալ առցանց հարթակներում³²: Մա նշանակում է, որ սոցիալական մեդիա հարթակներում գործող ալգորիթմները կարող են հարմարեցվել (օրենսդրության կամ էթիկական կանոնակարգերի շնորհիվ) պրոֆեսիոնալ լրագրողական կամ կառուցողական երկխոսություն խթանող բովանդակությանն առաջնահերթություն տալու համար:

³⁰ Sté u **Conrad M.** et al. (eds.), *Europe in the Age of Post-Truth Politics*, Palgrave Studies in European Political Sociology, Palgrave Macmillan Cham, 2022, էջ 53-75:

³¹ Sté u **McGinnies, E., & Ward, C. D.** Better liked than right: Trustworthiness and expertise as factors in credibility. *Personality and Social Psychology Bulletin*, 6(3), 1980, էջ 467-472:

³² Sté'u **Tufekci, Zeynep.** *Twitter and Tear Gas: The Power and Fragility of Networked Protest*, New Haven: Yale University Press, 2017:

Հետճշմարտության մարտահրավերները, ըստ էության, լինելով գիտատեխնիկական առաջընթացի, թվային տեխնոլոգիաների աճի հետևանք, պահանջում են այնպիսի լուծումներ, որոնք անմիջականորեն կապված են «խելացի» (smart) ռազմավարությունների և քաղաքականության վերանայման հետ: Ժամանակակից աշխարհում տեղական և ազգային քաղաքականության մակարդակով նկատվում է ինտենսիվ ինստիտուցիոնալ աջակցություն «խելացի» տեսլականների իրագործմանը, որի շնորհիվ «խելացի» տրամաբանությունը գերակայություն է ձեռք բերում որոշումների կայացման գործընթացում³³: Արդյունքում, ինչպես նշում են ոլորտի տեսաբանները, «Հանրային մտածողության և փաստերի ձևավորման փոփոխությունները, որոնց մենք ականատես ենք լինում, ըստ էության, ներկայացնում են «փակման» նոր եղանակներ, որոնք հանգեցնում են այլընտրանքային կամ այլակարծիք տեսակետների կամ պատկերացումների համար ավելի դաժան պայմանների»³⁴: Այսպիսի քաղաքականությունը նվազեցնում է բազմակարծության, հանրային ազատ և ռացիոնալ դիսկուրսի հնարավորությունը, ինչից հետևում է, որ կյանքի ամենատարբեր ոլորտներում թվային տեխնոլոգիաների կիրառման ռազմավարությունները վերանայման կարիք ունեն՝ որոշելու համար, թե իրականում որ տեսլականները կարող են լավագույնս ծառայել մեզ (լավագույնս «խելացի» լինել) վերը նշված վտանգները հաղթահարելու գործում³⁵:

Այսպիսով, այսօր հանրային ռացիոնալ քննարկումներ ունենալու մեր հնարավորությունն ամեն օր դառնում է ավելի վտանգված, իսկ բանականության հանրային գործադրման Լուսավորականության տեսլականը՝ ավելի հեռու և անիրական, քանի որ ժամանակակից հանրային ոլորտը չի հաջողում լինել հանրային տեղեկացված կարծիքի և ընդհանուր ճշմարտությունների ձևավորման դաշտ: Ժամանակակից հանրային ոլորտի երկու հիմնարար սկզբունքները՝ խոսքի ազատությունը և հրապարակայնությունը, կարծես թե դադարել են աջակցել ազատ և ինքնուրույն մտածողության գործադրմանը և այլակերպվել են՝ վերածվելով հետճշմարտության դարաշրջանի «հովանավորների»: Թվային տեխնոլոգիաների շնորհիվ տեղեկույթի և գիտելիքի դեմոկրատացումը (բոլորի հասանելի դարձնելը) միտում ունի հավասարեցնելու բղավոցն ու պնդումը, փաստն ու կարծիքը, գիտական ու դավադրապաշտական տեսությունները, փորձագիտական և ցանկացած այլ կարծիք, այնինչ արդյունքը պետք է լիներ հանրային դիսկուրսի հարստացումն ու ընդլայնումը, բոլոր մասնակիցների ներդրման՝ նրանց փորձառության և տեսակետների

³³ St' u Ballo, I. F. & Vaage, N. S. Public reasoning in "post-truth" times: Technoscientific imaginaries of "smart" futures. In Rommetveit, K. (Ed.), Post-Truth Imaginations: New Starting Points for Critique of Politics and Technoscience. Publisher: Routledge, 2021, էջ 138-160:

³⁴ Rommetveit, K. (Ed.). Post-Truth Imaginations: New Starting Points for Critique of Politics and Technoscience (1st ed.). Routledge, 2021, p. 152.

³⁵ St' u նույն տեղը, էջ 153:

նկատմամբ հարգանքը: Այնուամենայնիվ, գիտության, պրոֆեսիոնալ լրագրության նկատմամբ հանրային վստահության վերականգնման, գիտական և լրագրողական մեթոդների օգնությամբ առկա միտումներն ըմբռնելու, կրթության մեջ նոր իմացաբանական մոտեցումների, թվային տեխնոլոգիաների շուրջ առավել մտածված ռազմավարությունների և, վերջապես, հանրային ճշմարտությունների վերակառուցման «մեծ» քաղաքականության շնորհիվ հնարավոր է տարածքներ ստեղծել ռացիոնալ քննարկման և ժողովրդավարական ներգրավվածության համար՝ հիմնված ազատ և ինքնավար մտածողության վրա: Ուստի Կանտի լուսավորական տեսլականն անհատների մասին, որոնք ազատորեն և հրապարակավ գործադրում են իրենց բանականությունը հանրային ոլորտում՝ լուսավորելով մեկմեկու, հետճշմարտության ժամանակաշրջանի մարտահրավերները ըմբռնելու և հաղթահարելու տեսանկյունից մնում է կարևոր ուղղորդիչ և իդեալ:

ЛИЛИЯ ХАЧАТРИАН – Трудности публичного использования разума во времена пост-правды. – Эпоха постправды создает значительные препятствия для возможности индивидов свободно и автономно мыслить в публичной сфере, а также принимать обоснованные решения. В статье автор опирается на концепцию публичного использования разума немецкого философа XVIII века Иммануила Канта, подчеркивая, что отход от ценностей Просвещения угрожает будущему публичного рационального дискурса и демократии. В современном мире кантовская идея публичного использования разума сталкивается с рядом проблем, связанных с отходом от идеалов Просвещения или, по крайней мере, отклонением от них. В данной статье будут рассмотрены наиболее острые проблемы современного мира постправды: неверная информация (misinformation) и дезинформация (disinformation), алгоритмы социальных сетей и эхо-камеры, эмоциональная манипуляция и популизм. Каждый из перечисленных факторов в свою очередь подрывает необходимые условия для свободного и независимого рассуждения людей в публичной сфере. Тем не менее, путем пересмотра целей образования, восстановления доверия к традиционным институтам, внедрении более продуманных стратегий вокруг цифровых технологий и отдавая приоритет «большой» политике публичных истин, все еще возможно создать общественные пространства для свободного обсуждения и демократического участия.

Ключевые слова: *постправда, Просвещение, И. Кант, рациональный дискурс, дезинформация, ложная информация.*

LILIA KHACHATRYAN – Challenges for the Public Use of Reason in the Post-Truth Times. – The post-truth era presents significant obstacles to individuals' ability to reason freely and independently and make informed decisions in the public sphere. In the article, the author draws on the 18th-century German philosopher Immanuel Kant's concept of the public use of reason, highlighting that retreating from the values of Enlightenment threatens the future of public rational discourse and democracy. In today's world, the Kantian idea of public use of reason faces several challenges related to moving away from or at least deviating from Enlightenment ideals. This article will address the most pressing issues of the current post-truth world: misinformation and disinformation, social media algorithms and echo chambers, emotional manipulation, and populism. Each of these factors, in turn, undermines the necessary conditions for individuals to reason freely and independently in the public sphere. However, by revising the goals of education, rebuilding trust in traditional institutions, implementing more thoughtful strategies around digital

technologies, and prioritizing the "big" politics of public truths, it is still possible to create public spaces for free deliberation and democratic engagement.

Key words: *Post-truth, Enlightenment, I. Kant, rational discourse, disinformation, misinformation.*

Գրականության ցանկ

- Arendt H.** The Origins of Totalitarianism, New York: Harcourt, Brace, 1951
- Ballo I. F. & Vaage, N. S.** Public reasoning in "post-truth" times: Technoscientific imaginaries of "smart" futures. In Rommetveit, K. (Ed.), *Post-Truth Imaginations: New Starting Points for Critique of Politics and Technoscience*. Publisher: Routledge, 2021
- Bauman Z.** Liquid Modernity, 2000; Fuller, S., *Post-Truth: Knowledge as a Power Game*, 2018
- Bourdieu P.** The Logic of Practice, Stanford, Stanford University Press, 1990
- Chinn C. A., Barzilai, S., & Duncan, R. G.** Education for a "Post-Truth" World: New Directions for Research and Practice. *Educational Researcher*, 50(1), 2021
- Conrad M., et al. (eds.)**, Europe in the Age of Post-Truth Politics, Palgrave Studies in European Political Sociology, Palgrave Macmillan Cham, 2022
- Davies W.** The Age of Post-Truth Politics. The New York Times, 2016
- Douglas H.** Science, Policy and the Value-Free Ideal. Pittsburg: University of Pittsburg Press. 2009
- Enli G., Rosenberg L.T.** Trust in the Age of Social Media: Populist Politicians Seem More Authentic. *Social Media + Society*, 4(1), 2018
- Eppler M. J., & Mengis J.** The concept of information overload: A review of literature from organization science, accounting, marketing, MIS, and related disciplines. *The Information Society*, 20(5), 2004
- Ingrid Foss Ballo, Nora S. Vaage.** *Post-Truth Imaginations*. 1st Edition, Routledge, 2021
- Jasanoff S., & Simmet H. R.** No funeral bells: Public reason in a 'post-truth' age. *Social Studies of Science*, 47(5), 2017
- Lewandowsky S., Ecker U., & Cook J.** Beyond Misinformation: Understanding and Coping with the Post-Truth Era. *Journal of Applied Research in Memory and Cognition*, 6(4), 2017
- Lockie S.** Post-Truth Politics and the Social Sciences. *Environmental Sociology* 3 (1), 2017
- Mason L.** *Uncivil Agreement: How Politics Became Our Identity*. University of Chicago Press, 2018
- McIntyre L.** *Post-Truth*, Cambridge, The MIT Press, 2018
- McGinnies E., & Ward C. D.** Better liked than right: Trustworthiness and expertise as factors in credibility. *Personality and Social Psychology Bulletin*, 6(3), 1980
- Oreskes N., & Conway E. M.** *Merchants of Doubt: How a Handful of Scientists Obscured the Truth on Issues from Tobacco Smoke to Global Warming*. Bloomsbury Press, 2010
- Pariser E.** *The Filter Bubble: How the New Personalized Web is Changing What We Read and How We Think*. Penguin Press, 2011
- Peters M.** at el. Post-Truth, fake news: viral modernity & higher education. Springer, 2018
- Quong J.** Public Reason, Stanford Encyclopedia of Philosophy, 2022 (հղում՝ <https://plato.stanford.edu/entries/public-reason/>)
- Rommetveit K. (Ed.)**. *Post-Truth Imaginations: New Starting Points for Critique of Politics and Technoscience* (1st ed.). Routledge, 2021
- Stanley J.** *How Fascism Works: The Politics of Us and Them*. Random House, 2018
- Tufekci Z.** *Twitter and Tear Gas: The Power and Fragility of Networked Protest*, New Haven: Yale University Press, 2017

Valladares, L. Post-Truth and Education. Science & Education vol. 31, 2022

Vosoughi S., Roy D., & Aral S. The spread of true and false news online. Science, 359 (6380), 2018

Walter N. & Tukachinsky R. A meta-analytic examination of the continued influence of misinformation in the face of correction: how powerful is it, why does it happen, and how to stop it? Commun. Res. 47, 2020

Zhuravskaya E., Petrova M., Enikolopov R. Political Effects of the Internet and Social Media. Annual Review of Economics, Vol. 12, Issue 1, 2020

Кант И. Сочинения в шести томах. Т. 6. Москва, 1966

Кант И. Сочинения. В 8 т. Т.8. М.: Чоро 1994

ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՈՉՐՆԴՈՏՆԵՐԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

ՀԱՅԱՐՓԻ ՍԱՀԱԿՑԱՆ 

Երևանի պետական բժշկական համալսարան

Հողվածում քննարկվում են հեղինակության պաշտամունքը և դրա ազդեցությունը բովանդակության օբյեկտիվ գնահատման, նորարարության տարածման և հասարակական առաջընթացի վրա: Այս երևույթը դիտարկվում է պատմական և մշակութային տարբեր համատեքստերում՝ ընդգծելով, թե ինչպես է հեղինակային դիրքը հաճախ վերածվում գաղափարների գերակայության գործիքի՝ ստվերելով բովանդակության իրական արժեքը: Ընդ որում հեղինակությունը ոչ միայն ազդեցության աղբյուր է, այլև սոցիալական նորմերի և արժեքային համակարգերի ձևավորման գործիք, որը կարող է խոչընդոտել ազատ և քննադատական մտածողությունը:

Ուսումնասիրվում են Միշել Ֆուկոյի, Ռոլան Բարտի և Էդվարդ Սայիդի տեսակետները, որոնք կարևորվում են ազատ մտածողությունը և քննադատական մտեցումը խթանելու առումով: Ֆուկոն անդրադառնում է վերահսկողության մեխանիզմներին՝ բացատրելով, թե ինչպես են դրանք սահմանափակում ազատ մտածողությունը: Բարտը «հեղինակի մահվան» գաղափարով առաջարկում է առաջնային ուշադրությունը կենտրոնացնել բովանդակության վրա՝ անկախ դրա հեղինակից: Սայիդի Արևելք-Արևմուտք բինար հակադրությունների վերլուծությամբ բացահայտվում է հեղինակության միջոցով ստեղծված մշակութային գերակայությունները: Սրանք էլ իրենց հերթին հանգեցնում են մտավոր ազատության, գաղափարների բաց շուկայի և մշակութային ինստիտուտների ներսում գոյություն ունեցող հիերարխիաների խնդիրներին:

Թերևս, կրթական և մշակութային համակարգերի ազատականացման միջոցով կարելի կլինի հասնել բովանդակության ներքին արժեքի գնահատմանը և արժևորմանը: Ի վերջո, հեղինակային դիրքի ազդեցությունից ազատ միջավայրերն են, որ պետք է նպաստեն նորարարության խթանմանը, ներառականության ձևավորմանն ու հասարակական առաջընթացին՝ ապահովելով ազատ և քննադատական մտածողության զարգացումը:

* **Հայարփի Սահակյան** – ԵՊԲՀ հասարակագիտական առարկաների ամբիոնի դասախոս,

Կրթության որակի ապահովման բաժնի ավագ փորձագետ

Айарпи Саакян – преподаватель Ереванского государственного медицинского университета, старший специалист отдела обеспечения качества образования ЕГМУ

Hayarpi Sahakyan – Lecturer at Yerevan State Medical University, Senior Expert of the Education Quality Assurance Department at YSMU

Էլ. հասցե՝ sahakyanhayarpi198@gmail.com <https://orcid.org/0009-0002-5528-2618>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 03.02.2025

Գրախոսվել է՝ 07.02.2025

Հաստատվել է՝ 14.03.2025

© The Author(s) 2025

Բանալի բառեր – *հեղինակության կողմնակալություն, հեղինակ, բովանդակություն, տեքստ, ընթերցող, ընկալում, հեղինակային գործառույթ, քննադատական մտածողություն, Միշել Ֆուկո, Ռոլան Բարտ, Կառլ Փոփեր, Էդվարդ Մայիդ*

Հաճախ մարդիկ գաղափարները գնահատում են ոչ թե ըստ դրանց բովանդակության, այլ ըստ այն բանի, թե ով է դրանք արտահայտել: Այս երևույթը հայտնի է **«հեղինակության կողմնակալություն»** (authority bias) անվամբ: Այն հատուկ է տարբեր մշակույթներին ու հասարակություններին և ընդգծում է անձի կամ խմբի հեղինակության գերակայությունը՝ բովանդակության իրական արժեքի նկատմամբ, ինչն էլ իր հերթին խանգարում է գաղափարների օբյեկտիվ գնահատմանը և արժևորմանը:

«Հեղինակ» հասկացությունը մշտապես եղել է բանավեճի և վերախմայնացման առարկա՝ պայմանավորված նրա դերով, պատասխանատվությամբ և ազդեցությամբ: Գրականության, արվեստի և գիտության ոլորտներում հեղինակի դերը երկար ժամանակ դիտարկվել է իբրև անփոփոխ, կայուն արժեք, սակայն 20-րդ դարի քննադատական տեսությունները մարտահրավեր նետեցին այս ավանդույթին:

Վերոնշյալ տեսությունները հեղափոխական էին իրենց ժամանակի համար, քանի որ հարցականի տակ դրեցին ավանդական հեղինակային իշխանությունը՝ տեղափոխելով ուշադրությունը տեքստի ստեղծման գործընթացից դեպի դրա ընկալումը: Այս մոտեցումը փոխեց հեղինակի և ընթերցողի փոխհարաբերությունը՝ դարձնելով ընթերցողին ավելի ակտիվ դերակատար՝ ներգրավված տեքստի իմաստի կառուցման մեջ: Եվ ինչպես Ռոլան Բարտն է ասում, տեքստն այլևս չպետք է ընկալվի որպես հեղինակի մտավոր աշխարհայացքի անմիջական արտացոլանք: «Հեղինակի մահը» աշխատության մեջ նա գրում է. «Տեքստի իսկական իմաստը ոչ թե պետք է փնտրել նրա ստեղծման պատմության, այլ նրա ընթերցանության և վերաարժևորման մեջ»¹: Բարտի մոտեցումը հեղափոխեց արվեստի և գրականության վերլուծության մեթոդները՝ ընթերցողին ընձեռնելով անսահման հնարավորություն՝ դառնալու տեքստի ակտիվ մասնակիցը: Նրա հայեցակարգը հիմնված էր այն գաղափարի վրա, որ տեքստի իմաստը բազմակողմանի է, և ընթերցողն այն դարձնում է կենդանի իր անձնական փորձի և ընկալման միջոցով:

Ֆրանսիացի մեկ այլ մտածող՝ Միշել Ֆուկոն, շարունակելով Բարտի՝ հեղինակի ընկալման տրամաբանությունը, իր «Ո՞վ է հեղինակը» աշխատության մեջ անդրադառնում է հեղինակի սոցիալական և պատմական դերին՝ ընդգծելով, որ «հեղինակ» հասկացությունը լեգիտիմացնում է գիտելիքի սահմանափակումը: Նա մասնավորապես գրում է. «Հեղինակությունը գործիք է, որը կազմակերպում է գիտելիքը և սահմանափակում նորարարությունը»²:

¹ Barthes, Roland, The Death of the Author, Hill and Wang, 1967, p. 146.

² Foucault, Michel, What Is an Author?, Harvard University Press, 1969, p. 115.

Այսպիսով, փոխվեց տեքստի և հեղինակի միջև կապի ընկալումը. տեքստի ինքնավարությունը և ընթերցողի ազատությունը հնարավորություն ընձեռեցին վերախմաստավորելու գրականության, գիտության, փիլիսոփայության և հանրային դիսկուրսի կառուցվածքները:

Հեղինակության մշակութային պաշտամունքը և բովանդակության ստվերում

Հեղինակության հարցը վաղուց եղել է մշակութային քննարկումների կենտրոնում: Դեռ հին ժամանակներից հեղինակին վերագրվել է առանձնահատուկ իշխանություն՝ որպես ստեղծագործության միակ և անքննելի ելակետ: Ռենեսանսից հետո այս պատկերացումն էլ ավելի ամրապնդվեց՝ հեղինակին վերագրելով ինքնատիպություն և բացառիկ տաղանդ:

20-րդ դարում, Ռուլան Բարտի և Միշել Ֆուկոյի տեսությունների ազդեցությամբ, սակայն, այս մոտեցումը վերախմաստավորվեց: Նրանք պնդում էին, որ տեքստն անկախ է հեղինակից, և դրա իմաստը ձևավորվում է ընթերցողի ընկալմամբ: Այսպիսով, հեղինակային գերակայությունը տեղը զիջեց բազմազան մեկնաբանություններին, որտեղ իմաստն այլևս հաստատուն չէ, այլ բազմաշերտ և փոխակերպվող:

Այնուամենայնիվ, մշակութային դաշտում մինչ օրս էլ հեղինակի պաշտամունքը այս կամ այն ձևով պահպանվում է՝ հաճախ ստվերելով բուն բովանդակությունը: Հեղինակի անձը հաճախ ավելի մեծ ուշադրության է արժանանում, քան նրա ստեղծագործության ներքին արժեքը՝ վերածելով նրան մշակութային խորհրդանիշի և սահմանափակելով տեքստի ազատությունը՝ որպես ինքնուրույն միավորի:

Բարտն իր հիշատակված աշխատության մեջ այս երևույթն անվանում է «հեղինակի բռնապետություն»³: Նա նշում է, որ հեղինակի գերակայությունը սահմանափակում է տեքստի բազմակողմանի ընթերցանության հնարավորությունները՝ այն վերածելով ստեղծողի մտադրությունների բացահայտման միջոցի, ինչն էլ խոչընդոտում է տեքստի ինքնավարությանը և ընթերցողի ստեղծարար, կառուցողական մասնակցությունը: Այլ կերպ ասած՝ հեղինակի գերակայությունը ստիպում է ընթերցողին բացառապես կենտրոնանալ հեղինակի մտադրությունների բացահայտման վրա: Ըստ նրա՝ «հեղինակի կերպարը մահվան նշան է դնում տեքստի բազմաձայնության վրա»⁴: Այսպիսով, ընթերցողներն օգտագործվում են որպես գործիք՝ հեղինակի մտքերը դիտելու և վերլուծելու՝ առանց տեքստն ինքնուրույն մեկնաբանելու կամ վերլուծելու հնարավորության: Այսինքն՝ ընթերցողները վերածվում են միջոցի, որով հեղինակը վերահսկում է տեքստի ընկալումը՝ փոխանակ նրանց անկախ մեկնաբանողի կարգավիճակ տալու:

³ Տե՛ս **Barthes, R.**, նշվ. աշխ., էջ 147:

⁴ Նույն տեղում, էջ 149:

Միշել Ֆուկոն, քննադատելով հեղինակության ինստիտուցիոնալ դերը, այն ներկայացնում է որպես գիտելիքի սահմանափակման գործիք: Նա «հեղինակ» հասկացությունը փոխարինում է «հեղինակային գործառույթ» (author function)⁵ գաղափարով, որը վերահսկում է տեքստի իմաստն ու սահմանափակում ընթերցողի դերը: Ֆուկոն ընդգծում է, որ հեղինակությունը ոչ միայն ճանաչելիություն է տալիս տեքստին, այլև կարգավորում ու վերահսկում է գաղափարների տարածումը: «Հեղինակությունը դառնում է մի համակարգ, որը սահմանափակում է գաղափարները, որոշում դրանց պատկանելությունն ու վերահսկում դրանց տարածումը»⁶: Այս մոտեցմամբ ընթերցողը պասիվ ընկալող չէ, այլ ակտիվ մասնակից, ով ինքն է ձևավորում տեքստի իմաստը: Նա նշում է, որ հեղինակի ինստիտուցիոնալ դերը ձևավորվել է ոչ միայն մտավոր ժառանգությունը պահպանելու, այլ նաև գաղափարները կարգավորելու և վերահսկելու համար. «Հեղինակությունը միաժամանակ ծառայում է տեքստերի ճանաչելիությունն ապահովելու և դրանց ազատությունը սահմանափակելու նպատակին»⁷:

Փաստորեն, հեղինակի պաշտամունքը ոչ միայն սահմանափակում է տեքստի մեկնաբանությունը, այլ նաև ստեղծում մշակութային և սոցիալական հիերարխիաներ, որտեղ որոշ տեքստեր բարձրացվում են մյուսների հաշվին՝ պարզապես դրանց հեղինակների հանրահայտության շնորհիվ:

Հայկական մշակույթում ևս նկատվում է նման մոտեցում: Հեղինակների՝ որպես ազգային գաղափարների կրողների պաշտամունքն առաջացնում է նրանց ստեղծագործությունների բովանդակային ընթերցանության խեղաթյուրում: Որոշ հեղինակների ստեղծագործություններ հաճախ ուսումնասիրվում են՝ հաշվի առնելով լրկ նրանց քաղաքական կամ հասարակական գործունեությունը: Այս մոտեցումը, սակայն, սահմանափակում է այդ տեքստերի բովանդակային արժեքի անկախ գնահատումը: Ավելին, տեքստի՝ սովերում մնալը հաճախ հանգեցնում է այն բանին, որ բովանդակությունը ենթարկվում է կաղապարված մեկնաբանությունների:

Բարտի և Ֆուկոյի տեսական մոտեցումները հնարավորություն են տալիս վերաիմաստավորելու տեքստի և հեղինակի միջև եղած կապը: Հեղինակի պաշտամունքի քննադատությունը, դրա հաղթահարումն ազատում են տեքստը՝ թույլ տալով ընթերցողին հանդես գալ ոչ թե որպես դիտորդ, այլ որպես մասնակից: Բարտը գրում է, որ «տեքստը պատկանում է ընթերցողին, այլ ոչ թե հեղինակին»⁸:

⁵ Բարտը գործածում է «scriptor» հասկացությունը՝ ընդգծելու համար, որ հեղինակը տեքստի վերջնական ու անքնին նշանակություն ու իմաստ հաղորդող չէ, այլ գուտ մեկը, ով տեքստը ստեղծել է ու այլևս դառնում է ընթերցողի մեկնաբանության առարկա:

⁶ Foucault, Michel, նշվ. աշխ., էջ 116:

⁷ Նույն տեղում, էջ 117:

⁸ Barthes, R., նշվ. աշխ., էջ 149:

Այս մոտեցումը կարևոր է նաև մեր օրերում, երբ հեղինակի անձը հաճախ շարունակում է ստվերել ստեղծագործությունը: Օրինակ, սոցցանցերի և մեդիայի հզորությունն ավելի է ընդգծում հեղինակի կերպարը՝ տեքստը վերածելով հեղինակի հանրային ինքնության արտացոլանքի: Եվ սոցցանցերի ներկա աշխարհում շարունակում է իրավացի մնալ Ֆուկոյի այն դիտարկումը, որ «մշակույթը շարունակում է ստեղծել նոր հեղինակներ, որոնք կրկին դառնում են բովանդակության սահմանափակման գործիքներ»⁹:

Թերևս, հեղինակի մշակութային պաշտամունքի հաղթահարման ճանապարհը տեքստի և ընթերցողի ազատ փոխհարաբերության հաստատումն է: Հեղինակության ավանդական դերի վերաիմաստավորումը թույլ կտա նոր հեռանկարներից ուսումնասիրել ինչպես տեքստերը, այնպես էլ դրանց ազդեցությունը մշակութային դաշտում:

Հեղինակի դերի վերաիմաստավորումը

Հեղինակի դերի մասին բանավեճը սկսվել է դեռևս միջնադարում, երբ ստեղծագործություններն ընկալվում էին որպես աստվածային ներշնչանքի արդյունք: Ժամանակի ընթացքում, հատկապես Վերածննդի դարաշրջանում, անհատ ստեղծագործողը դարձավ կենտրոնական դերակատար, և տեքստը սկսեց բացառապես կապվել նրա կենսագրության ու հեղինակության հետ:

Այս անցման արդյունքում հեղինակը ձեռք բերեց այնպիսի դոմինանտ դեր, որը, սակայն, 20-րդ դարում սկսեց մտահոգությունների ալիք բարձրացնել: Բարտը նշում է, որ հեղինակի անձի վրա կենտրոնանալը սահմանափակում է տեքստի մեկնաբանությունը. «Հեղինակի մահը նշանակում է տեքստի ծնունդը: Յուրաքանչյուր ընթերցող նորից և նորից կյանք է տալիս տեքստին՝ հիմնվելով սեփական փորձի, աշխարհայացքի և ընկալման վրա»¹⁰: Այս գաղափարը հեղափոխեց հատկապես գրականության և արվեստի ընկալումը՝ առաջարկելով տեքստը կամ ստեղծագործությունը դիտարկել իբրև ինքնավար և բազմաշերտ միավոր՝ բաց մեկնաբանությունների համար: Ինչպես Ֆուկոն էր պնդում, հեղինակային ֆիգուրն այլևս պետք է գործի զուտ որպես սանիտար որոշելու, թե գաղափարներից որոնք կարող են մուտք գործել հանրային դիսկուրս¹¹:

Ֆուկոյի հայեցակարգը կարևոր է ինչպես քաղաքական, այնպես էլ գիտական դիսկուրսներում, որտեղ հեղինակի կարգավիճակը հաճախ դառնում է գիտելիքի լեգիտիմության գրավական: Այլ կերպ ասած՝ «այն անբաժանելի մասն է այն բանի, թե ինչպես է գիտելիքը վավերացվում, դասակարգվում և փոխանցվում որոշակի հաստատություններում: Հեղինակային գործառույթը

⁹ Foucault, M., նշվ. աշխ., էջ 120:

¹⁰ Barthes, R., նշվ. աշխ., էջ 148:

¹¹ Տե՛ս Foucault, M., նշվ. աշխ., էջ 113:

գործում է որպես պատասխանատվություն վերապահելու և գաղափարների ազատ հոսքը սահմանափակելու մեխանիզմ»¹²:

Այս մոտեցումները մարտահրավեր են նետում ավանդական ընկալումներին, որտեղ հեղինակը դիտարկվում է որպես տեքստի միակ նշանակալի մեկնաբանող: Դրանք առաջադրում են նոր սկզբունքներ.

1. Բովանդակության ինքնավարություն. տեքստը պետք է դիտվի որպես ինքնուրույն իմաստային համակարգ՝ անկախ հեղինակից, խրախուսելով ընթերցողի ակտիվ ներգրավվածությունը:

2. Մշակութային համատեքստի կարևորությունը. տեքստի բովանդակությունը հասկանալու համար անհրաժեշտ է այն վերլուծել տվյալ ժամանակի և սոցիալական միջավայրի համատեքստում:

3. Հեղինակ-ընթերցող երկխոսություն. ընթերցողն ունի գաղափարներ ձևավորելու իր իրավունքը՝ ստեղծելով երկխոսություն հեղինակի հետ:

Նոր մարտահրավերներ. այս մոտեցումները, սակայն, հանգեցնում են պատասխանատվության խնդրի: Եթե տեքստը տարանջատվում է հեղինակից, ապա ո՞վ է պատասխանատու դրա բովանդակության, սխալների կամ էթիկական խախտումների համար. ինստիտուցիոնալ մարմինները, խմբագիրները, թե՞ հասարակությունը:

Տեղեկատվական դարաշրջանում այս հարցն առավել արդիական է. անանուն կամ առանց հեղինակի տարածվող բովանդակությունը կարող է մոլորեցնել կամ առաջացնել լուրջ հետևանքներ, երբ չկա հստակ պատասխանատվություն կրող: Հետևաբար, հեղինակի դերի վերաիմաստավորումը կարևոր է ոչ միայն նորարարության ու բազմակարծության խթանման, այլև քննադատական մտածողության ու տեղեկատվական պատասխանատվության ձևավորման համար:

Արևելք-Արևմուտք հակադրությունը և հեղինակության ազդեցությունը

Արևմուտքը իր մշակութային գերակայության և տեխնոլոգիական առաջատարության շնորհիվ ձևավորում է գաղափարական գլոբալ ուղղությունները հատկապես ակադեմիական և մշակույթի ոլորտներում, որտեղ նրա աշխարհայացքը հաճախ ընկալվում է որպես չափանիշ:

Էդվարդ Մայիդն իր ազդեցիկ «Օրիենտալիզմ» աշխատության մեջ ցույց է տալիս, թե ինչպես է Արևմուտքը կառուցում «օրիենտի» նարատիվները՝ այն ներկայացնելով որպես «էկզոտիկ» և «ստորադաս»: Նա ընդգծում է, որ «օրիենտը գոյություն ունի ոչ թե որպես անկախ իրականություն, այլ որպես Արևմուտքի ստեղծած ներկայացումների արդյունք»¹³, որի պարագայում գաղափարները և դրանց հեղինակները հաճախ անտեսվում են կամ բացառվում,

¹² Նույն տեղում, էջ 114:

¹³ Said, Edward W., *Orientalism*, Pantheon Books, 1978, p. 5.

քանի որ արևելյան աշխարհայացքը չի տեղավորվում արևմտյան մշակութային չափանիշների մեջ:

Այս մոդելը նաև սահմանափակում է ոչ արևմտյան գաղափարների ներգրավումը գիտական ու ինտելեկտուալ դաշտեր. արևելյան գիտնականների աշխատանքները հաճախ մնում են ստվերում, իսկ գիտական ուշադրությունը կենտրոնանում է արևմտյան հեղինակների վրա՝ արդյունքում խոչընդոտելով նաև մշակութային երկխոսությունը:

Մյուս կողմից՝ արևելյան հասարակություններում հեղինակության պաշտամունքը պայմանավորված է պատմական և սոցիալական ավանդույթներով. այստեղ գաղափարների ընկալման հիմնական չափանիշը հաճախ ոչ թե դրանց բովանդակությունն է, այլ ներկայացնող անհատի կարգավիճակը, ինչը հատկապես ակնհայտ է քաղաքական, գիտական ու մշակութային ոլորտներում:

Արևելյան մտավորականության մեջ այս երևույթը կարող է հանգեցնել բովանդակության ստվերում մնալուն՝ խոչընդոտելով նորարարական մտքերի և գաղափարների առաջընթացը: Ինչպես նշում է Մայիդը, «գաղափարները միշտ համատեքստի արդյունք են, և այդ համատեքստը հաճախ ձևավորվում է ուժային հարաբերությունների միջոցով»¹⁴:

Արևելք-Արևմուտք հակադրության այս համատեքստն ազդում է նաև գիտության վրա. արևելյան երկրներում գիտական համագործակցությունները հաճախ սահմանափակվում են տեղային շրջանակներով, ինչը նվազեցնում է դրանց միջազգային ազդեցությունը: Բացի այդ, արևելյան գաղափարները հաճախ ներկայացվում են որպես «էկզոտիկ»՝ առանց բովանդակային վերլուծության:

Արևելք-Արևմուտք բինար հակադրության ազդեցությունը հատկապես նկատելի է մշակույթի ոլորտում: Արևմուտքը հաճախ ներկայացվում է որպես նորարարական և առաջադեմ, մինչդեռ Արևելքը՝ որպես ավանդական և անփոփոխ: Այս դինամիկան ազդում է նաև գրականության և արվեստի վրա, որտեղ արևելյան ստեղծագործությունները հաճախ համարվում են «էկզոտիկ»՝ առանց դրանց համատեքստի խորության գնահատման: Ինչպես նշում է Հոմի Բհաբհան իր «Մշակույթի գտնվելու վայրը» աշխատության մեջ, «մշակութային ներկայացումները միշտ չէ, որ արտացոլում են իրենց իրականության ամբողջականությունը, քանի որ դրանք հաճախ ձևավորվում են գերիշխող դիսկուրսների ազդեցությամբ»¹⁵:

Հեղինակության պաշտամունքը և հայկական իրականությունը

Ինչպես տեսանք, Արևելք-Արևմուտք հակադրության համատեքստում հեղինակության պաշտամունքն արտահայտվում է տարբեր կերպ: Արևմուտքում այն առավել կապված է անհատականության գերակայության հետ, որտեղ հեղինակը դառնում է գաղափարների վավերացման հիմնական միջոցը:

¹⁴ Նույն տեղում, էջ 23:

¹⁵ Bhabha, Homi K., The Location of Culture, Routledge, 1994, p. 37.

Մինչդեռ Արևելքում այն շեշտադրում է ավանդույթներն ու կուլեկտիվիզմը, որտեղ գաղափարի արժեքը հաճախ կախված է այն ներկայացնող անձի հեղինակությունից:

Հայ հասարակության մեջ ևս այս երևույթը խոր արմատներ ունի, հատկապես խորհրդային շրջանում, երբ կենտրոնացված իշխանությունը խթանում էր անձնավորված մոտեցումը: Քաղաքականության, գիտության և մշակույթի ոլորտներում անհատները հաճախ վերածվում էին գաղափարների խորհրդանիշների, իսկ նրանց ստեղծած բովանդակությունը՝ հեղինակության արտացոլման¹⁶:

Խորհրդային շրջանում հեղինակապաշտությունը ներթափանցել էր գրեթե բոլոր ոլորտները՝ գիտություն, կրթություն, գրականություն: Դասագրքերում պարտադիր հղումներ էին արվում Մարքսին, Լենինին, Ստալինին՝ հաճախ կեղծ գիտական ձևակերպումներով: Օրինակ, մաթեմատիկայի դասագրքերում կարող էին ընդգրկվել հետևյալ ձևակերպումները. «Ստալինիզմի առաջնորդությամբ մաթեմատիկայի նոր ուղղությունները կնպաստեն կոմունիստական մտքի առաջընթացին», կամ՝ «Մարքսը տնտեսության մեջ արեց այն, ինչ մաթեմատիկոսները պետք է անեն գործնական խնդիրների լուծման հարցում»¹⁷:

Այսօր, իհարկե, հասկանալի է, որ սրանք որևէ կապ չունենին մաթեմատիկայի մասնագիտական թեմաների հետ, սակայն պատմական դրդապատճառներից ելնելով՝ «հորինվում էին» նման կապեր՝ հաստատման արժանանալու և տպագրվելու համար: Իսկ, օրինակ, անգլերենի դասագրքերում երբեմն կարելի էր հանդիպել հետևյալ բնույթի ձևակերպումների. «Ամերիկացիները չեն հասկանում կոմունիստական արժեքները, ինչը նշանակում է, որ նրանք զուրկ են իրական գիտելիքներից ու գիտությունից»¹⁸: Այսօր նման ձևակերպումները ոչ միայն տրամաբանական չեն, այլ նաև ակնհայտորեն արտահայտում են քաղաքական նպատակադրումներ՝ վերածելով գիտությունը քաղաքական գաղափարների տարածման չարդարացված եղանակի: Սակայն մի ամբողջ սերունդ ստիպված է եղել կրթվել այդ համատեքստում, որտեղ այսօրինակ թելադրանքները հաճախադեպ էին: Այսպիսի օրինակները դարաշրջանի գաղափարախոսական դրդապատճառների հետևանքով համապարտադիր դարձան՝ վերածվելով խորհրդային հասարակության ավանդույթների:

Այդ տարիներին գրական ստեղծագործությունները հաճախ գնահատվում էին ոչ թե դրանց գեղարվեստական արժեքով, այլ հեղինակի քաղաքական

¹⁶ Տե՛ս **Hovannisian, Richard G.**, *The Republic of Armenia*, University of California Press, 1996, էջ 96-99:

¹⁷ **Воронков, Александр.** *Образование и идеология в советский период*, М., МГУ, 1975:

¹⁸ **Сталин, Иосиф.** *Марксизм и вопросы языка*, Полное собрание сочинений, том 10. Издательство "Правда", 1952, с. 99.

դիրքորոշմամբ և գաղափարախոսությանը համապատասխանությամբ¹⁹: Ինչպես Ֆուկոն է նկատում, «հեղինակությունը գիտելիքի կազմակերպման և վերահսկման գործիք է, որը կարգավորում է հանրային գաղափարների շրջանառությունը»²⁰:

Այսօր էլ հեղինակապաշտությունը շարունակում է ազդել հասարակական և ակադեմիական միջավայրի վրա: Որոշումներ հաճախ ընդունվում են ոչ թե գաղափարի տրամաբանությամբ, այլ ներկայացնող անհատի հեղինակությամբ: Ռոլան Բարտը նշում է. «Տեքստը դառնում է արժեքավոր ոչ թե իր ինքնուրույնության, այլ հեղինակի հեղինակության շնորհիվ»²¹:

Հայ մշակութային դաշտում հեղինակի պաշտամունքը հատկապես նկատելի է ազգային գրականության և արվեստի ուսումնասիրություններում: Հայ մշակույթի հետազոտություններում հաճախ է նկատվում միտում՝ գրողների և արվեստագետների ստեղծագործությունները դիտարկել որպես ազգային գաղափարների մարմնավորում: Դա հաճախ կարող է սովորել ստեղծագործությունների գեղարվեստական արժեքը՝ դրանք սահմանափակելով միայն ազգային նարատիվների շրջանակներում: Մարկ Նշանյանն իր «Միմլոլիզմը հայ գրականության մեջ» գրքում նշում է, որ նման մոտեցումը հաճախ խանգարում է հասկանալու ստեղծագործությունների բուն էությունը՝ ստիպելով դրանք մեկնաբանել միայն գաղափարական տեսանկյունից, ինչն էլ սովորաբար խոչընդոտում է բովանդակության ազատ և անկողմնակալ գնահատումը²²:

Ֆուկոյի և Բարտի տեսական մոտեցումները կարող են նպաստել այս համատեքստում հայկական իրականության վերաիմաստավորմանը՝ ձևավորելով բովանդակության ազատ և քննադատական մոտեցումներ՝ տեղ բացելով նորարար գաղափարների համար:

Բովանդակության ստվերումը որպես նորարարությունների խոչընդոտ

Փաստացի նորարարության զարգացումը պահանջում է գաղափարների ազատ փոխանակում և բովանդակության անկաշկանդ գնահատում: Սակայն պահպանողականությունն ու հեղինակության գերակայությունը հաճախ խոչընդոտում են այս գործընթացը՝ սահմանափակելով ստեղծագործական մոտեցումները և թույլ չտալով, որ բովանդակությունն ինքնուրույն զարգանա: «Ամենամեծ վտանգը գաղափարի համար այն է, երբ այն կուռք է դառնում՝ կորցնելով իր ինքնուրույնությունը»²³: Սա հատկապես նկատելի է կրթական

¹⁹ Տե՛ս **Fitzpatrick, Sheila**, *Everyday Stalinism: Ordinary Life in Extraordinary Times*, Oxford University Press, 1999, էջ 11:

²⁰ **Foucault, M.**, նշվ. աշխ., էջ 117:

²¹ **Barthes, R.**, նշվ. աշխ., էջ 149:

²² Տե՛ս **Մ. Նշանյան**, Միմլոլիզմը հայ գրականության մեջ, Եր., 1996, էջ 34:

²³ **Sartre, Jean-Paul**, *Being and Nothingness*, Philosophical Library, 1943, p. 89.

այն համակարգերում, որտեղ ուսանողներին սովորեցնում են ընդունել հեղինակավոր աղբյուրները որպես անքննելի ճշմարտություն՝ առանց խրախուսելու քննադատական վերլուծությունը:

Պահպանողական և հիերարխիկ հասարակություններում, որտեղ կուլեկտիվիզմն առաջնային է, նորարարությունը հաճախ ընկալվում է որպես «սպառնալիք» համակարգի կայունությանը: Այստեղ սոցիալական կարգն ու ավանդույթների պահպանումը սովորաբար գերակայում են ստեղծագործական մտածողության նկատմամբ, ինչը հանգեցնում է գաղափարների ընկալման անհավասարության՝ բովանդակության արժեքը պայմանավորելով ներկայացնող անհատի կարգավիճակով:

Ի տարբերություն դրա՝ Արևմուտքում, որտեղ անհատականությունը գերակա է, նորարարական գաղափարները խրախուսվում են որպես ինքնարտահայտման միջոց: Հոֆսթեդի մշակութային չափանիշների տեսության համաձայն՝ անհատականությունը գերադասող հասարակություններում մարդիկ ավելի հակված են փորձարկելու նոր մոտեցումներ, քանի որ այստեղ շեշտը դրվում է անհատի արժեքի և իրավունքների վրա²⁴:

Այսպիսով, բովանդակության՝ սովերում մնալու հիմնական պատճառներից մեկը նաև հեղինակի «ելակետ» կամ այլ կերպ ասած՝ ստեղծագործության կենտրոնն ու առանցք լինելն է: Մա բնորոշ է թե՛ կրթական և թե՛ գիտական ոլորտներին, որտեղ որոշ գաղափարներ կամ մոտեցումներ կարող են մնալ սովերում, եթե դրանց հեղինակները չունեն համապատասխան դիրք (շատ հաճախ քաղաքական) կամ հեղինակություն (ճանաչում): Հաննա Արենդտն իր «Մարդկային իրադրությունը» աշխատության մեջ գրում է. «Իշխանության հիերարխիան հաճախ սահմանափակում է մարդկանց արժեքավոր գաղափարներ արտահայտելու կարողությունը, քանի որ գաղափարներն ընկալվում են միայն այն դեպքում, երբ դրանք ներկայացվում են *ճիշտ* մարդկանց կողմից»²⁵:

Բացի այդ, գաղափարների զարգացումը կարող է խոչընդոտվել նաև այն պատճառով, որ որոշ մշակույթներում «հեղինակավոր» գաղափարները քիչ են քննադատվում: Մա ստեղծում է մի միջավայր, որտեղ նորարարության համար անհրաժեշտ խթաններն անտեսվում են: Եվ իրավամբ. «Անհատի իրավունքը՝ արտահայտելու նորարարական գաղափարներ, հաճախ սահմանափակվում է այն մտքով, որ դրանք կարող են խախտել գոյություն ունեցող կարգը»²⁶:

Այսպես, կուլեկտիվիստական և հիերարխիկ մշակույթներում, ինչպես խորհրդային շրջանում, նորարարությունը հաճախ ընկալվում է որպես «չա-

²⁴ Sե՛ u Hofstede, Geert, Cultures and Organizations: Software of the Mind, McGraw-Hill, 1991, p. 112.

²⁵ Arendt, Hannah, The Human Condition, University of Chicago Press, 1958, p. 45.

²⁶ Lasswell, Harold, Politics: Who Gets What, When, How, McGraw-Hill, 1936, p. 78.

րիք» համակարգի կայունությանը: Մինչդեռ անհատականության վրա հիմնված մշակույթներում այն համարվում է զարգացման շարժիչ ուժ՝ խրախուսելով գաղափարների ազատությունը և բազմազանությունը:

Գաղափարների ազատ շուկան՝ ընդդեմ հեղինակային գերակայության

Սովորաբար, եթե գաղափարները ստվերվում են անհատների հեղինակությամբ, առաջընթացը սահմանափակվում է, հետևապես հարկ է, որ դրանք «քննադատվեն, զարգանան և հարմարվեն գիտական նոր ձեռքբերումներին և սովալներին»²⁷:

Ինչպես Փոփերն էր պնդում, «գաղափարների անքննելիությունը բաց հասարակության հիմնական թշնամին է», ուստի գիտական տեսությունները պետք է գնահատվեն ըստ փաստերի, այլ ոչ թե հեղինակության, քանի որ «դրանք բոլորն էլ ենթակա են ճշտման և անհրաժեշտության դեպքում նաև՝ ժխտման»²⁸: Հեղինակի գերակայությունը, հակառակը, հաճախ սահմանափակում է գաղափարների ազատությունը՝ ստեղծելով մոնոպոլիաներ: Այս երևույթը բնորոշ է այն հասարակություններին, որտեղ գաղափարների արժևորումը հիմնվում է ներկայացնող անհատի կարգավիճակի վրա: Ազատ շուկան, ընդհակառակը, նպաստում է նորարարություններին՝ թույլ տալով բազմազան մոտեցումների մրցակցությունը: Դրա շնորհիվ գաղափարները զարգանում են, բարելավվում և հարմարվում նոր պայմաններին: Այսինքն՝ նորարարությունը դառնում է հնարավոր, երբ հեղինակությունները չեն խոչընդոտում գաղափարների հոսքը:

1. «Հոգեբանական բարեկեցության գնահատման մեթոդիկա», Ա. Գ. Սամոխվալովա, Ե.Վ. Տիխոմիրովա, Ն.Ս. Շիպովա, Օ. Ն. Վիշնևսկայա, «Հոգեբանական բարեկեցության գնահատման մեթոդիկա» (տեղայնացում և վերիֆիկացիա. հայերեն տարբերակը՝ Է. Ասրիյանի, Ն. Կարապետյանի, 2022):

2. «Քաղաքական առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոններ ի դուրսբերման հարցարան» կազմելու համար տեսամեթոդական հիմքը

⁵ Sté u Layard R., Jan-Emmanuel De Neve, Wellbeing, science and policy, Cambridge University Press, 2023, 354 էջ:

⁶ Sté u Келасъев В.Н. Социальная защита населения и власть // Журнал социологии и социальной антропологии. 1999, Т. 2, № 2, sotsialnaya-zaschita-naseleniya-i-vlast.pdf (6.12.23):

Պ. Լազարսֆելդի, Է. Կեմպբելլի, Է. Դաունսի, Պ. Վ. Սիմոնովի, Մ. Վեբերի, Դ. Գոուլմանի, Ա. Մասլոուի Դ. Սմիթի տեսություններն են:

3. Քաղաքական առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների վերլուծության կիսակառուցվածքային հարցազրույց:

Վերլուծության համար կիրառվել են Սպիրմենի գործակիցը (առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների նախընտրության և բարեկեցության կապվածությունը դուրս բերելու համար), X^2 -ն՝ փոփոխականների միջև կապվածության բացահայտման համար (սեռի/տարիքի և հոգեբանական բարեկեցության մակարդակի կապվածության վերաբերյալ), ինչպես նաև T-test-ը՝ խմբերում առկա վիճակագրորեն նշանակալի տարբերությունները արձանագրելու համար (քաղաքական առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների նախընտրության և սեռի/տարիքի միջև առկա նշանակալի տարբերություններ):

Հետազոտության մասնակիցները բաժանվել են ըստ հետևյալ տարիքային խմբերի՝ 19-35 տ.՝ ընդգրկելով երիտասարդության (վաղ հասունության) փուլերը, և 36-60 տ.՝ միջին հասունության շրջանը: 19-35 տարեկան հետազոտվողները կազմել են ընդհանուր հետազոտական ընտրանքի 70%-ը, իսկ 36-60 տ. հետազոտվողները՝ 30%-ը: Նման բաշխվածությունը կարելի է բացատրել նրանով, որ, ըստ վիճակագրական տվյալների, մեր օրերում երիտասարդների դերը հասարակությունների քաղաքական կյանքում աճել է, և նրանք ավելի ակտիվ, փոփոխություններին միտված քաղաքական վարք են դրսևորում: Հայաստանի երիտասարդները բավականին ինտենսիվորեն են ներգրավված քաղաքական տեղեկատվության և գործողությունների դաշտում: Վերջին տարիներին քաղաքացիական շարժումներին մասնակցության առումով երիտասարդությունը գերակշռող էր: Այսօր Հայաստանում գործում են բավականին երիտասարդ կազմ ունեցող Կառավարություն և Ազգային ժողով⁷:

Ստացված տվյալների վերլուծություն:


Հոգեբանական բարեկեցության մակարդակի գնահատման մեթոդիկայի համաձայն՝ առանձնացվել են վիճակագրական հետևյալ տվյալները՝ ըստ սեռի և տարիքի:

Գծապատկեր 1-ում ներկայացված է հոգեբանական բարեկեցության տոկոսային բաշխվածությունը ըստ սեռերի, ըստ բարձր և միջին ցուցանիշների (ցածր միտվածության): Իգական սեռի ներկայացուցիչների շրջանում հոգեբանական բարեկեցությունը բարձր է՝ 40%, իսկ արական սեռի ներկայացուցիչների շրջանում գրանցվել է հոգեբանական բարեկեցության միջին (դեպի ցածր միտվածության) ցուցանիշ՝ 29% արժեքով:

⁷ Տե՛ս Երիտասարդների մասնակցությունը Հայաստանում որոշումների կայացման և խաղաղաշինության գործընթացներին, Եր., 2019: Նաև՝ Ա. Պապյան, Դ. Հայրապետյան, Ա. Պետրոսյան, Ս. Մանուկյան, Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Մաս 1 – հետազոտական մաս, Եր., 2011, 104 էջ:

Գծապատկեր 1

Հոգեբանական բարեկեցության ցուցանիշի տոկոսային բաշխումը ըստ սեռի



Աղյուսակ 1

X² սեռի և հոգեբանական բարեկեցության ցուցանիշի կապվածությունը


Tests	Chi-Square	
	Value	Asymp. Sig. (2-sided)
Pearson Chi-Square	5,657 ^a	,017
Continuity Correction ^b	4,675	,031
Likelihood Ratio	5,751	,016
Fisher's Exact Test		
Linear-by-Linear Association	5,600	,018
N of Valid Cases	100	

a. 0 cells (0,0%) have expected count less than 5. The minimum expected count is 15,50.

Իրականացվել է նաև X² սեռի և հոգեբանական բարեկեցության կապվածության բացահայտման վերաբերյալ: Ըստ հաշվարկի՝ X²=5,657; p<0.05: Սա նշանակում է, որ մեր ընտրանքում սեռի և հոգեբանական բարեկեցության ցուցանիշների միջև առկա է նշանակալի կապ: Հոգեբանական բարեկեցության ցուցանիշը նաև տարբերակման է ենթարկվել ըստ տարիքի:

Գծապատկեր 2

Տարիքային խմբերի տոկոսային բաշխումը ըստ ՀԲ ցուցանիշի



Երիտասարդների շրջանում գրանցվել է հոգեբանական բարեկեցության բարձր ցուցանիշ՝ 61%, և միջին բարեկեցություն՝ 9%, իսկ միջին հասունության շրջանում գրանցվել են 22% գերակայող արժեքով միջին (դեպի ցածր միտվածության) բարեկեցության ցուցանիշ և 8% բարձր միտվածության բարեկեցության ցուցանիշ: Հաջորդիվ իրականացվել է տարիք և հոգեբանական բարեկեցություն փոփոխականների միջև նշանակալի կապի վերլուծում. արդյունքները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 2

X² տարիքի և հոգեբանական բարեկեցության կապվածությունը

Chi-Square Tests		
	Value	Asymp. Sig. (2-sided)
Pearson Chi-Square	35,907 ^a	,000
Continuity Correction ^b	33,135	,000
Likelihood Ratio	35,313	,000
Fisher's Exact Test		
Linear-by-Linear Association	35,548	,000
N of Valid Cases	100	

a. 0 cells (0,0%) have expected count less than 5. The minimum expected count is 9,30.

Հաշվարկելով X²-ն տարիքային խմբերի և հոգեբանական բարեկեցության համար՝ բացահայտվել է, որ X²=35.907; p<0.05, ինչը նշանակում է, որ տարիքի և հոգեբանական բարեկեցության ցուցանիշների միջև առկա է նշանակալի կապ: Ըստ մեր ընտրանքի արդյունքների՝ վաղ հասունության կամ երիտա-

սարդության շրջանում առկա է միտվածություն հոգեբանական բարեկեցության բարձր մակարդակին, իսկ միջին հասունության շրջանում առկա է միջին կամ ցածր միտվածություն: Վերջինս կարող է պայմանավորված լինել արտաքին և ներքին մի շարք գործոնների ազդեցությամբ (կենսապայմաններ, սոցիալական դեր, հոգեբանական և ֆիզիկական առողջություն): Մասնավորապես երիտասարդության շրջանը բնորոշվում է ճկունությամբ, հարմարվողականությամբ, ինքնիրացման մեծ հնարավորություններով, իսկ արդեն միջին հասունությունն ընդգրկող շրջանում կյանքի տարբեր իրավիճակներում կարող են առաջ գալ հարմարվողականության, ճկունության դրսևորման դժվարություններ, և ինչպես նշում է Էրիկսոնը՝ սա այն շրջանն է, երբ անձը հետադարձ է գցում իր կյանքին, նվաճումներին, գնահատում ներկայի ռեսուրսները և հնարավորությունները, ունենում դիրքի և դերի փոփոխություններ (Է. Էրիկսոն, 1996):

Մեր առջև դրված նպատակից ելնելով՝ Ստյուդենտի t-test-ի միջոցով իրականացվել է անկախ խմբերի համեմատություն՝ հետազոտվողների հոգեբանական բարեկեցության մակարդակների և առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների միջև նշանակալի տարբերությունները դուրս բերելու համար:

Գծապատկեր 3

Խմբերում հոգեբանական բարեկեցության ցուցանիշից բխող՝ առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների միջինացված արժեքներ

	Բարեկեցության միջին ցուցանիշ	Բարեկեցության բարձր ցուցանիշ
■ Անձնային առանձնահատ.	19.6	24.5
■ Գաղափարախոս.	19.9	23.1
■ Հուզական գրավ.	27.5	19.8
■ Նյութական և հոգեբանական շահ	26.3	18
■ Սոցիալական պատկանելություն	23.7	16
■ Մասնագիտական որակներ	21.4	26.8

Առանձնացնելով բարձր և միջին մակարդակի բարեկեցությամբ բնորոշվող խմբերը և առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնները՝ կարող ենք նշել, որ ըստ միջին արժեքների համեմատության՝ հոգեբանական բարեկեցության միջին ցուցանիշի խմբում միջինացված արժեքով առավել կարևոր-

վել են առաջնորդի հուզական գրավչությունը ($m=27,5$), նյութական և հոգեբանական սպասվելիք շահը ($m=26,3$), սոցիալական պատկանելությունը ($m=23,7$): Հոգեբանական բարեկեցության բարձր ցուցանիշներ ունեցողների խումբը կարևորել է քաղաքական առաջնորդի անձնային առանձնահատկությունները ($m=24,5$), քաղաքական գաղափարախոսությունը և դիրքորոշումները ($m=23,1$) և մասնագիտական որակները ($m=26,8$):

Աղյուսակ 3

ՀԲ միջին և բարձր ցուցանիշներով խմբերում առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների նշանակալի տարբերությունները ըստ t-Մթյուդենտի գործակցի

Independent Samples Tests			
		t-test for Equality of Means	
		T	Sig. (2-tailed)
Անձնային առանձնահատկություն	Equal variances assumed	-8,198	,000
Գաղափարախոսություն	Equal variances assumed	-3,841	,000
Հուզական գրավչություն	Equal variances assumed	6,225	,000
Նյութական և հոգեբանական շահ	Equal variances assumed	6,110	,000
Սոցիալական պատկանելություն	Equal variances assumed	5,844	,000
Մասնագիտական որակներ	Equal variances assumed	-8,660	,000

Ելնելով վերոնշյալ խմբերում միջին արժեքների համեմատությունից՝ արձանագրվել են վիճակագրական հետևյալ արդյունքները. անձնային առանձնահատկություն՝ $t=-8,198$; գաղափարախոսություն՝ $t=-3,841$; հուզական գրավչություն՝ $t=6,225$; նյութական և հոգեբանական շահ՝ $t=6,110$; սոցիալական պատկանելություն՝ $t=5,844$; մասնագիտական որակներ՝ $t=-8,660$: Ստացված տվյալները մատնացույց են անում, որ հոգեբանական բարեկեցության միջին և բարձր մակարդակ ունեցող խմբերում գրանցվել են նշանակալի տարբերություններ առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների նախընտրությունում. ընտրությունը պայմանավորող բոլոր բլոկների համար նշանակալիության աստիճանն էր $p<0.05$ -ից:

Ըստ ստացված տվյալների՝ հոգեբանական բարեկեցության բարձր և միջին մակարդկաներ ունեցող անձինք կարող են տարբերվել քաղաքական առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների կարևորության գնահատմամբ, քանի որ բարեկեցության տարբեր մակարդակների հիմքում դրված են տարբեր պահանջմունքներ և դրդապատճառներ: Համադրելով հոգեբանական բարեկեցության գնահատման մեթոդիկայի բովանդակային մեկնաբանությունները և մեր կողմից ստացված արդյունքները՝ կարող ենք ասել, որ անձինք, որոնք բնորոշվում են բարեկեցության միջին ցուցանիշով, առկա պահանջմունքներից ելնելով, առավել կարևորում են քաղաքական առաջնորդի հետևյալ գործոնները՝ հուզական գրավչություն, նյութական և հոգեբանական շահ, սոցիալական պատկանելություն: Անձինք, որոնք գրանցել են բարեկեցության բարձր միավորներ, բնորոշվում են ուժեղ և թույլ կողմերը տարբերակելու կարողությամբ, ռացիոնալ վարքով, կյանքի հեռանկարների գիտակցմամբ, ինքնազարգացման և կոմպետենտության ձգտմամբ, ուստի կարևորում են քաղաքական առաջնորդի անձնային առանձնահատկությունները, գաղափարախոսությունն ու մասնագիտական որակները:

Աղյուսակ 4

Հոգեբանական բարեկեցության և առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների կորելյացիոն կապվածություն

		Անձնային առանձնահատկություն	Գաղափարախոսություն	Հուզական գրավչություն	Նյութական և հոգեբանական շահ	Մոցիալական պատկանելություն	Մասնագիտական որակ	Հոգեբանական բարեկեցություն
Spearman's rho	Correlation Coefficient	,529**	,405**	-,270**	,273**	-,398**	,595**	1,000
	Sig (2-tailed)	,000	,000	,006	,006	,000	,000	
	N	100	100	100	100	100	100	100
**. Correlation is significant at the 0.01 level (2-tailed). *. Correlation is significant at the 0.05 level (2-tailed).								

Հաջորդ փուլում փորձել ենք պարզել՝ արդյո՞ք հետազոտվող մի փոփոխականի վրա ազդեցությունը հանգեցնում է մյուսի փոփոխության: Արդյունքում, ինչպես երևում է աղյուսակ 4-ից, քաղաքական առաջնորդի անձնային առանձնահատկությունները, գաղափարախոսությունը, մասնագիտական որակները անձի բարեկեցության հետ դրական և ուժեղ կորելյացիոն կապի մեջ են. առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների մեջ առկա են հետևյալ գործակիցները. անձնային առանձնահատկություններ՝ $r=0,529$, գաղափարախոսություն՝ $r=0,405$; մասնագիտական որակներ՝ $r=0,595$: Սա նշանակում է, որ որքան բարձր է անձի հոգեբանական բարեկեցության մակարդակը, այնքան մեծ է առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների մեջ առաջնորդի անձնային առանձնահատկությունների, գաղափարախոսության, մասնագիտական գործոնները կարևորելու աստիճանը: Մյուս կողմից, հաշվի առնելով հետևյալ ցուցանիշները՝ հուզական գրավչություն՝ $r= -0,270$; նյութական և հոգեբանական շահ՝ $r=-0,273$; սոցիալական պատկանելություն՝ $r=0,398$, հետևաբար՝ $p<0,05$ -ից, կարող ենք ասել, որ որքան նվազում է բարեկեցության մակարդակը, այնքան առաջնորդի ընտրությունը պայմանավորող գործոնների մեջ ավելի մեծանում է հուզական գրավչության, նյութական և հոգեբանական շահի և սոցիալական պատկանելության գործոնները կարևորելու աստիճանը: Ըստ փորձագիտական հարցման տվյալների՝ հասարակությունը առաջնորդի ընտրության վերաբերյալ որոշման հիմքում հաճախ կարող է դիտարկել սեփական խնդիրների լուծման սպասելիքը և սեփական պահանջմունքների բավարարման ցանկությունը: Տարբեր սոցիալական խմբեր, սեփական կարիքից և պահանջմունքներից ելնելով, հաճախ ենթագիտակցորեն կարևորում են քաղաքական առաջնորդի այն բնութագրիչները, որոնք կարճատև կամ երկարատև հեռանկարներում կարող են դիտարկվել ակտուալ պահանջմունքների բավարարման միջոց: Ակկումուլյացիայի ենթարկված այս կամ այն պահանջմունքը կարող է ակտիվանալ նույնիսկ պահանջմունքի բավարարման չնչին խթանի առկայությամբ, հետևաբար հոգեբանական բարեկեցության բարձր և միջին մակարդակներ ունեցող խմբերը կարող են բնորոշվել առաջնորդի հանդեպ ունեցած սպասումների միանման սխեմաներով և, ելնելով պահանջմունքների բավարարման կանխատեսումներից, նախապատվություն տալ համապատասխան բնութագրիչներ ունեցող քաղաքական առաջնորդներին:

ЭЛИНА АСРИЯН, КРИСТИНЕ ЗАЗЯН, АСМИК САРГСЯН – Психологическое благополучие как социально-психологический фактор выбора лидера. – В данной статье представлены результаты исследования, в котором изучалась корреляционная связь между факторами психологического благополучия и выбором политического лидера. В современных условиях, когда социальная, политическая и экономическая ситуация в обществе динамично изменяется, психологическая наука уделяет все больше внимания понятию благополучия. Это связано с тем, что благополучие является одним из ключевых показателей,

характеризующих уровень жизни как отдельного человека, так и общества в целом. Исследование проводилось в два этапа. В первом этапе приняли участие 100 человек, а во втором – 15 экспертов, среди которых 8 психологов и 7 политологов. Анализ полученных данных выявил значимую связь между полом и показателями психологического благополучия ($\chi^2 = 5,657$; $p < 0,05$), а также между возрастом и показателями психологического благополучия ($\chi^2 = 35,907$; $p < 0,05$). С помощью коэффициента корреляции Спирмена установлено, что психологическое благополучие коррелирует с факторами, определяющими выбор лидера, на уровне значимости $p < 0,05$.

Результаты экспертного опроса показали, что граждане, исходя из своих потребностей, выбирают и ценят в политическом лидере те качества, которые, по их мнению, способны обеспечивать удовлетворение этих потребностей в долгосрочной перспективе. Результаты экспертного опроса показали, что граждане определяют приоритеты и ценят определенные факторы в лидерах, основываясь на своих потребностях, рассматривая эти факторы как потенциальные средства удовлетворения в будущем.

Ключевые слова: психологическое благополучие, личность, лидер, молодежь, электоральное поведение, потребность.

ELINA ASRIYAN, KRISTINE ZAZYAN, HASMIK SARGSYAN – Psychological Well-Being as a Socio-Psychological Factor in Choosing a Leader. - This article presents the findings of a study examining the correlation between psychological well-being and the factors influencing the selection of a political leader. In contemporary society, where social, political, and economic conditions are in constant flux, psychological science—alongside other disciplines—has increasingly focused on the concept of well-being. This emphasis stems from the recognition that well-being constitutes a fundamental indicator of both individual and societal quality of life. The study was conducted in two stages. The first stage involved a sample of 100 participants, while the second stage included 15 experts, comprising 8 psychologists and 7 political scientists. Statistical analysis of the data revealed a significant relationship between gender and psychological well-being indicators ($\chi^2 = 5.657$; $p < 0.05$), as well as between age and psychological well-being indicators ($\chi^2 = 35.907$; $p < 0.05$). Furthermore, Spearman's correlation coefficient analysis indicated a statistically significant association between psychological well-being and the factors influencing the selection of a political leader ($p < 0.05$).

The results of the expert survey suggest that individuals, guided by their specific needs, tend to prioritize and value leadership attributes that they perceive as instrumental in ensuring long-term satisfaction and well-being.

Key words: psychological well-being, person, leader, youths, electoral behavior, requirement.

Գրականության ցանկ

Ասիրյան Է. Վ., Ստեփանյան Լ. Ս., Սամոխվադովա Ա. Գ., Ուսանողների հոգեբանական բարեկեցության գնահատման մեթոդիկա՝ ստուգում և վավերացում // Հոգեկան առողջության հայկական հանդես, 13(2), 2022

Երիտասարդների մասնակցությունը Հայաստանում որոշումների կայացման և խաղաղաշինության գործընթացներին, Երևան, 2019

Պապյան Ա., Հայրապետյան Դ., Պետրոսյան Ա., Մանուկյան Ս., Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, մաս 1 – հետազոտական մաս, Երևան, 2011, - 104 էջ

Келасьев В. Н. Социальная защита населения и власть // Журнал социологии и социальной антропологии. 1999, т. 2, №2

Плучевская Э. В., Емельяненко Е. Е., Психологическое благополучие как фактор, влияющий на развитие конкурентоспособности личности студента в образовательной среде // Вестник науки Сибири. 2016. № 4 (23)

Fisher A. T., E. C. W Ng, Understanding Well-Being in Multi-Levels, Volume 5, No. 1 (2013), 323 pg.

Layard R., Jan-Emmanuel De Neve, Wellbeing, science and policy, Cambridge University Press, 2023, 354 pg.

Ryff D. Carol, Burton Singer, Psychological well-being: meaning, measurement, and implications for psychotherapy research, 1996, article in Psychotherapy and Psychosomatics, February 1996 PWB-Me.

ՄՈՂԵԼԱՎՈՐՈՂ ԳԻՏԱՓՈՐՁՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԱՐՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՀԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ , ԱՐՄԵՆ ԼՈՔՅԱՆ* 

Երևանի պետական համալսարան

Մողելավորող գիտափորձերը մեր օրերում դարձել են մարդկանց վարքի և հոգեբանության տեսակետներն ուսումնասիրելու նշանակալի գործիք: Այսպիսի հետազոտություններում կարևորվում են ոչ միայն օբյեկտիվ տվյալների ստացումը, այլև հետազոտության մասնակիցների հոգեբանական վիճակի, վարքային դրսևորումների և մոտիվացիայի հաշվառումը, որոնք մեծ մասամբ պայմանավորված են գիտափորձին նախապատրաստվելու գործընթացով: Ենթադրվում է, որ հետազոտվողների վարքի և մոտիվացիայի արդյունավետ կառավարումը մողելավորող գիտափորձում հնարավորություն է ընձեռում ստանալու ավելի ճշգրիտ ու արժանահավատ արդյունքներ, ինչպես նաև նվազեցնելու իրականությունից կտրված, կեղծ տվյալներ ստանալու հավանականությունը՝ բացառելով այն սխալները, որոնք մասնակիցների չհետաքրքրվածության կամ սթրեսի հետևանք են: Այդուհանդերձ, ստացվող տվյալների մաքրության պահանջը կապված է նաև մի շարք սահմանափակումների հետ. արհեստական լաբորատոր պայմաններում գործնականում հնարավոր է մողելավորել կյանքի իրական պայմանների միայն առանձին դրվագները: Եվ գիտա-

* **Սահակ Հովհաննիսյան** – մանկավարժական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող

Саак Оганесян – кандидат педагогических наук, доцент кафедры общей психологии ЕГУ, научный сотрудник научно-исследовательского центра психологии ЕГУ

Sahak Hovhannisyán – PhD, Associate Professor at YSU Chair of General Psychology, Senior Researcher, Research Center of Psychology, YSU

Էլ. փոստ՝ s.hovhannisyany@ysu.am <https://orcid.org/0000-0002-4733-322X>

Արսեն Լոքյան – հոգեբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող

Арсен Локян – доктор психологических наук, научный сотрудник научно-исследовательского центра психологии ЕГУ

Arsen Lokyan – Doctor of Psychology, Senior Researcher, Research Center of Psychology, YSU

Էլ. փոստ՝ a.loqyan@ysu.am <https://orcid.org/0000-0001-8630-0925>

■ *Հետազոտությունն իրականացվել է «ԵՊՀ» հիմնադրամի և «Դի Սի Ուայ» ՄՊԸ միջև 01.03.2024-ին հաստատված գիտահետազոտական աշխատանքների կատարման պայմանագրի շրջանակներում:*



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 04.02.2025

Գրախոսվել է՝ 06.02.2025

Հաստատվել է՝ 14.03.2025

© The Author(s) 2025

կան հետազոտությունում ձևավորված ցանկացած փորձարարական իրավիճակ իրականության մոդել է, որում դրսևորվում է հետազոտվող հոգեկան երևույթը կամ դրա հատկությունները: Ուստի հետազոտության հաջողությունը որոշվում է այն բանով, թե որքանով է այդ մոդելը պահպանել կամ վերարտադրել ուսումնասիրվող օբյեկտի էական հատկությունները և անտեսել ոչ էականները:

Սույն հոդվածում դիտարկվում են մոդելավորող գիտափորձում ընդգրկված անձանց հոգեբանական առանձնահատկություններն ու նրանց վարքի կառավարման մեթոդական մոտեցումները:

Բանալի բառեր - *մոդելավորող գիտափորձ, գործառական-համեմատական մոդել, մոդելավորված բեռնվածություններ, վարորդ-հետազոտվող, մոտիվացիա, սթրես, վարքի կառավարում*

Սույն հետազոտության արդիականությունն ընդգծվում է այն հանգամանքով, որ, գիտության և տեխնիկայի բուռն զարգացմամբ պայմանավորված, վերջին տարիներին զգալիորեն ընդլայնվել են բնական օբյեկտների, իրապես գոյություն ունեցող ֆիզիկական համակարգերի և դրանց առանձին դրսևորումների նմանակման ու մոդելավորման շրջանակները: Ներկայիս փորձարարական հոգեբանության զարգացումները և մարդկանց վարքային դրսևորումների կառավարումը մոդելավորվող միջավայրերում ավելի մեծ հնարավորություններ են ստեղծում ուսումնասիրելու անհատների վարքը տարբեր՝ սոցիալական, աշխատանքային, մասնագիտական, նաև գիտագործնական պայմաններում: Մա հնարավոր է դարձնում ավելի ճշգրիտ գնահատել փորձարարի կողմից ընտրված գործոնների ազդեցությունը և վերլուծել հետազոտվողների անհատական վարքի կառավարման յուրահատուկ մոտեցումները:

Ժամանակակից հոգեբանության տարատեսակ բնագավառների առաջադիմական բնույթն այն է, որ գիտական ճանաչողության հիմնական մեթոդների շարքում կարևոր դեր ունեն նաև հետազոտվող օբյեկտների, իրական երևույթների մոդելների կառուցումն ու դրանց միջոցով արվող բացահայտումները:

Որոշ աղբյուրներում¹ մոդելավորման մեթոդը կարևորվում է երկու տեսակետից. առաջին՝ ուսուցման համակարգում մոդելի և մոդելավորման հասկացությունների ներմուծման անհրաժեշտության, երկրորդ՝ մոդելավորման կիրառման ձևերի, ժամանակի և վայրի հետազոտության՝ իբրև դիտարկվող երևույթների որոշակի առանձնահատկությունների ու հարաբերությունների հաստատագրման և բացահայտման առավել տեսանելի միջոցի: Սակայն պետք է նշել, որ «մոդելավորում» հասկացությունն ունի նվազագույնը երեք

¹ Ст' u Гурский А. В. Моделирование ведущих параметров двигательных действий для оптимизации управления техническим мастерством лыжников-гонщиков: Автореф. дисс. канд. пед. наук. Малаховка, 1981, 17 էջ: Уткин В. Л. Имитационное моделирование энергетического обеспечения циклических движений у спортсменов // Теор. и практ. физ. культ. 1985, № 2, էջ 14:

նշանակություն. 1) օբյեկտների իմացության մեթոդ՝ դրանց մոդելների միջոցով, 2) այդ մոդելների կառուցման գործընթաց և 3) իմացական գործունեության ձև (իբրև մտածողություն ու երևակայություն)²: Բնականաբար, մեզ գլխավորապես հետաքրքրում է առաջին տարբերակը, իսկ մոդելավորման բազմաբնույթ մեկնաբանություններից մեր դիտանկյունից առավել ընդունելի է Ի. Բ. Նովիկի և Ա. Ի. Ուեմովի ձևակերպումը: Ըստ նրանց՝ մոդելավորումը «օբյեկտի միջնորդավորված տեսական կամ գործնական հետազոտումն է, որի ընթացքում անմիջականորեն հետազոտվում է ոչ թե հենց մեզ հետաքրքրող օբյեկտը, այլ որոշակի օժանդակ՝ բնական կամ արհեստական համակարգը (մոդելը). ա) որը գտնվում է որոշակի օբյեկտիվ համապատասխանության մեջ ճանաչվող օբյեկտի հետ, բ) որն ունակ է փոխարինելու նրան իմացության որոշակի փուլերում, և գ) որը հետազոտման ընթացքում վերջին հաշվով տեղեկատվություն է հաղորդում հենց մոդելավորվող օբյեկտի վերաբերյալ»³:

Մոդելավորման ճանաչողական բնույթի ըմբռնումը փաստում է նաև Ա. Մ. Մեդվեդևը (2010), ով ուսումնական գործընթացում առաջ եկող նորագոյացություններն ուսումնասիրելիս բացահայտել է, որ հատվածավորումը (դրվագավորումը), մտային գիտափորձը և/կամ մոդելավորումը. այսինքն՝ այն, ինչը կարող է կառուցվող գործունեության ձևը կապել այնպիսի նախատիպի հետ, ինչպիսին գիտաճանաչողական գործունեությունն է, պարզվում է՝ ամփոփվում է պրակտիկ գործողության կողմնորոշիչ հիմքի կերտումով⁴: Ընդհանուր առմամբ, ձևավորող, ուսուցանող և/կամ գենետիկական-մոդելավորող գիտափորձերի գաղափարը հոգեկան զարգացման գործընթացի արհեստական վերստեղծումն է (մոդելավորումը), իսկ նպատակը՝ այս կամ այն հոգեկան նորագոյացության առաջացման պայմանների ու օրինաչափությունների ուսումնասիրումը⁵:

Ակներև է նաև, որ ներկայիս հարաշարժ մարտահրավերները շարունակ նորանոր բարդ հոգեբանական հիմնահարցեր են առաջադրում ոչ միայն մոդելավորման մեթոդը կիրարկող հոգեբան հետազոտողներին, այլև ամենատարբեր մասնագիտությունների տեր անձանց, որոնք ներգրավվում են մոդելավորող գիտափորձերում: Մասնավորաբար, ներկայացվող մոդելավորող գիտափորձում շեշտադրված հետազոտական հիմնահարցն առնչվել է ինչպես արհեստավարժ վարորդներին, այնպես էլ անձնական օգտագործման մեքենա

² Տե՛ս Մասնագիտական գործունեության մոդելավորման հոգեբանական հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ / ԵՊՀ: Կազմ. և գլխ. խմբագիր՝ Ս. Վ. Հովհաննիսյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 38:

³ **Новик И. Б., Уемов А. И.** Моделирование и аналогия // Материалистическая диалектика и методы естественных наук. М., 1968, с. 257-258.

⁴ Տե՛ս **Медведев А. М.** Генетико-моделирующий метод и диагностика новообразований учебной деятельности // Психологическая наука и образование. 2010. Том 15. № 4, էջ 91–99:

⁵ Տե՛ս **Ардашева А. Л.** Формирующий эксперимент как один из основных методов педагогической психологии // Экономика и социум. 2017, № 11(42), էջ 95:

վարողներին, որոնց սթրեսի մակարդակը, կոգնիտիվ բեռնվածությունը, հոգնածությունը, քնկոտությունն ու գործառական այլ վիճակներն ուսումնասիրվել են մոդելավորված տարաբնույթ խնդիրները լուծելիս: Վերջիններս գերազանցապես կապված են եղել ճանապարհատրանսպորտային պատահարների, վթարային ու սթրեսային իրավիճակների, վտանգի, ռիսկի և տևական լարվածության պայմաններում օրգանիզմի և հոգեկանի գործառության բավարար մակարդակի պահպանման անհրաժեշտության, ինչպես նաև օրինակելի վարորդին բնորոշ վարքագծի դրսևորման հետ: Բացի այդ՝ կառավարման ոլորտի մասնագետներին շատ են հետաքրքրում հատկապես այնպիսի հարցեր, որոնք պայմանավորված են աշխատանքային մեծ բեռնվածությունների ազդեցության և դրանց վերահսկելիության գործընթացով:

Այդ գործընթացում բավականին մեծ տեղ է հատկացվում թե՛ մասնագիտական պատրաստությանը, թե՛ նորարարական լուծումների և տեխնոլոգիաների, այդ թվում՝ կենսաբանական հետադարձ կապի⁶, ժամանակակից համակարգիչների, չափող սարքերի և անվտանգային համակարգերի կիրառմանն ու ներդրմանը, այս դեպքում՝ վարորդական գործունեության մոդելավորման բնագավառում:

Այսպիսով, համոզված ենք, վարորդական գործունեության պայմանների՝ խճուղային և քաղաքային տարբեր ծանրաբեռնվածության ու երկարության տարածությունների մոդելավորումն ու վարորդների բնական բեռնվածությունների պլանավորումը պետք է իրագործվեն լաբորատոր պայմաններում հետազոտության մասնակիցների վարքի վրա դրանց ազդեցության համալիր ուսումնասիրման նպատակով՝ կախված նրանց աշխատունակության վիճակից: Եվ հոգեֆիզիոլոգիական տեղաշարժերի ուսումնասիրման հետ առանձնահատուկ ուշադրություն պետք է հատկացվի վարորդների վարքի դիտարկմանը գործունեության պայմանների և փորձարարական ներգործությունների մոդելավորված բեռնվածությունները կրելիս:

Հետևապես, մոդելավորող գիտափորձի համար կառուցվել են ֆիզիկական ակտիվություն դրսևորելիս մարդու հոգնածության, քնկոտության, ճանաչողական բեռնվածության, սթրեսի մակարդակի և այլ գործառական վիճակների որոշման ու կանխատեսման մոդելներ՝ հիմնված մեքենայական ուսուցման ալգորիթմների կիրառությամբ, կրելի և հեռակառավարվող սենսորներով անընդհատ չափվող էլեկտրոֆիզիոլոգիական, վարքաբանական և այլ՝ կենսաազդանշանների տվյալների վրա: Բացի այդ՝ վարորդի մասնագիտական

⁶ Տե՛ս Ս. Վ. Հովհաննիսյան, Կենսաբանական հետադարձ կապի կիրառման հոգեբանական չափանիշները մոդելավորող գիտափորձում / «Տեսական, փորձարարական և կիրառական հոգեբանության հիմնահարցեր», Երիտասարդ գիտնականների ժողովածու, ԵՊՀ հրատ., Եր., 2006, էջ 71-78: **Аванесян Г. М.** Психологические механизмы биологической обратной связи в эксперименте, моделирующем деятельность спортсмена. Вестник МАНЭБ, СПб., т. 9, № 3, Ер., 2004, էջ 172-175:

գործունեության՝ իբրև բարդ դինամիկ համակարգի ժամանակակից պատկերացումը, որտեղ կառավարողը վարորդն է և նրա կողմից իրականացվող ներգործությունը, իսկ կառավարելին՝ ավտոմեքենան, ենթադրում է կառավարման գործընթացի հիմնական օրինաչափությունների դիտարկում:

Ինչպես նշում է Վ. Տխորևը (1999), կառավարումը կոնկրետ որոշումների մշակման, իրագործման և վերահսկման նեղ փոխկապակցված գործողությունների պարփակված պարբերաշրջան է, իսկ նրա ընդհանուր սկզբունքային դրույթները մնում են անփոփոխ և հանգում՝

- քննարկվող գործունեության (գործողության) մասին ամբողջական և բազմակողմանի տեղեկատվության առկայությանը,
- հետազոտվողի վիճակի բազային և միջանկյալ մոդելների առկայությանը,
- աշխատանքային ազդեցությունների մոդելների առկայությանը,
- արտաքին և աշխատանքային գործոնների ազդեցության ներքո կառավարելի օբյեկտում առաջ եկող փոփոխությունների վերահսկողության համակարգի առկայությանը⁷:

Առհասարակ, մոդելավորող գիտափորձերում վարքի կառավարման նպատակով դիտարկվող հոգեբանական տեսություններից յուրաքանչյուրը մասնակիցների վարքի ձևավորման վերաբերյալ առաջարկում է իր ուրույն մոտեցումները: Ժամանակակից դիտանկյունից ենթադրվում է, որ գիտափորձի մասնակիցը հետաքրքրված, միամիտ դիտորդ է, որը փորձարարական ներգործություններին ու ձեռնածություններին արձագանքում է առանց կանխակարծության: Սակայն, ինչպես պնդում է Դ. Մարտինը (2008), մասնակիցները պարզապես անաչառ, անկողմնակալ դիտորդներ չեն, նրանք ունեն որոշակի պատկերացումներ, որոնք հաճախ ստրբերվում են փորձարարի նպատակներից⁸:

Ըստ այդմ, գերմանացի մի խումբ հետազոտողների կարծիքով, հրահրման ստրբեր մեթոդների արդյունավետությունը գնահատելու համար ևս կարելի է օգտագործել նմանակումն ու մոդելավորումը: Հենց այդ նպատակով էլ 2020-ին կատարված իրենց հետազոտությունում նրանք առաջարկում են մարդու վարքը վերարտադրող մի մոդել՝ հիմնված թվային միջավայրում մասնակիցների խաղային վարքը դիտարկող գիտափորձի վրա: Հետազոտության երկրորդ փուլում նրանց առաջարկված մոդելն ընդլայնվում է՝ ներառելով հրահրող մի քանի մեթոդների ազդեցությունը խաղացողների որոշման կայացման վրա և

⁷ Տե՛ս **Тхорев В. И.** Управление соревновательной и тренировочной деятельностью гандболистов высокой квалификации на основе моделирования: Автореф. дисс. доктор. пед. наук, Краснодар, 1999, 50 էջ:

⁸ Տե՛ս **David Martin** (2008), *Doing Psychology Experiments*, 7th Edition, Thomas Watson Publishing.

դրան հարմարվելու համար⁹: Հանրահայտ է նաև օպերանտային վարքի մասին Բ. Սքինների (1960) մոտեցումը, ըստ որի՝ արտաքին միջավայրի ներգործությունն է պայմանավորում յուրաքանչյուրի վարքը¹⁰, հետևաբար մոդելավորող գիտափորձում ևս խրախուսանքի և պատժի միջոցով կարելի է հասնել մասնակիցների վարքի ցանկալի դրսևորումների ամրապնդմանն ու անցանկալիների նվազեցմանը: Մոդելավորման համատեքստում հետաքրքրական են նաև Սքինների արմատական վարքաբանությունից զգալիորեն տարբերվող կոգնիտիվ վարքաբանական մոտեցումները, որոնց առանձնահատկություններն առավել հստակորեն ներկայացված են Ա. Բանդուրայի և Ջ. Ռոտերի աշխատանքներում¹¹: Այս հեղինակների մոտեցումն այն է, որ թեպետ շրջակա միջավայրն ազդում է մարդու վարքի վրա, բայց և այնպես մարդիկ ևս ակտիվ դեր ունեն իրենց կյանքի վրա ազդող իրադարձություններում, հետևապես երբ հետազոտության մասնակիցները գիտակցեն իրենց մասնակցության կարևորությունը, ապա նրանց վարքը կարող է փոխվել:

Այսպիսով, վարորդների գործունեությունը մոդելավորելիս նախապատվությունը տրվել է գործառական-համեմատական խառը տիպի մոդելների ստեղծմանը, քանզի համեմատական մոդելավորումն օգտագործվում է բարդ համակարգերի հետազոտություններում, թեպետ դրանց կիրառական արժեքը սահմանափակվում է իրական օբյեկտների և համեմատական համակարգերի տարրերի զուգորդման դժվարություններով: Իսկ մոդելավորող գիտափորձի արդյունքները միտված են եղել ամբողջացնելու երեք մասից (վարման կեղծագործում լաբորատոր միջավայրում, ավտոմեքենայի վարում առաջադրված երթուղով քաղաքում և խճուղային պայմաններում՝ մայրուղիներում) բաղկացած շարունակական բազմափուլ հետազոտությունը, որի վերջնականատակն է նկարագրող և բացատրական խնդիրների լուծումից հետո նորարարական առաջարկներով հանգուցալուծել նաև իրական տեխնիկայի՝ մեքենայի արդիականացման հիմնախնդիրը:

Վերը նշված բազմափուլ հետազոտության պոպուլյացիայի (գլխավոր միագումարության) ներկայացուցչականությունն ապահովելու համար ամբողջական ընտրանքի կազմը ընդհանուր թվով 1600 հետազոտվող (800-ական արական և իգական սեռի ներկայացուցչներ), մոդելավորվել է՝ հաշվի առնելով մասնակիցների ազգային պատկանելությունն ու սեռատարիքային առանձնահատկությունները:

⁹ Տե՛ս **Stephanie C. Rodermund, Ricardo Buettner, Ingo J. Timm** (2020), Towards Simulation-Based Preplanning for Experimental Analysis of Nudging / 15th International Conference on Wirtschaftsinformatik, March 08-11, Potsdam, Germany. // URL:

https://www.researchgate.net/publication/337707434_Towards_Simulation-Based_Preplanning_for_Experimental_Analysis_of_Nudging

¹⁰ Տե՛ս **Хьелл П., Зиглер Д.** Теории личности. 3-е изд. СПб.: Питер, 2008, էջ 332: **Скиннер Б. Ф.** Оперантное поведение. // URL: https://royallib.com/book/skinner_berres/operantnoe_povedenie.html

¹¹ Տե՛ս **Хьелл П., Зиглер Д.** Теории личности..., էջ 373-374:

Ընդհանուր ընտրանքի 78 %-ը (շուրջ 1248 մասնակից) ներգրավվել է մոդելավորող գիտափորձի նախապատրաստմանը, մասնավորաբար՝ մեքենայական ուսուցման մեթոդներով դասակարգության մոդելների կառուցման, գործարկման ու փորձարկման ընթացակարգերի կարգաբերմանը:

Մոդելավորող գիտափորձի հետազոտական ընտրանքը (ընդամենը 352 մասնակից, ընդհանուր ընտրանքի 22 %-ը) ձևավորվել է նախապես ընտրված փորձարարական պլանի համապատասխան. էթնիկ խմբերից յուրաքանչյուրում 20%-ը կազմել են 17-35 տ., 40%-ը՝ 36-54 տ., իսկ մնացած 40%-ը՝ 55 և ավելի տարիք ունեցող մասնակիցները:

Ընտրանքի բաշխումն ըստ էթնիկ խմբերի պատկանելության կազմվել է ուսումնասիրվող գլխավոր միագումարության բաշխվածության համաձայն, այսինքն՝ կրեոլ սարքեր օգտագործողների էթնիկ բնութագրով՝ առօրյա կյանքում նշմարվող գործառական վիճակը գնահատելու համար: Ձևավորված ընտրանքի բաշխումն ըստ տարիքի համամասնորեն համաչափ է ուսումնասիրվող գլխավոր միագումարության՝ մարդու կենսագրանշանները գրանցելու հնարավորությամբ կրեոլ սարքեր օգտագործողների համանման բաշխվածությամբ:

Շարունակական հետազոտության պայմանները (անցկացման վայրը, ժամանակը, իրադրությունը) և մոդելավորող գիտափորձում օգտագործված սարքերի ու սարքավորումների բնույթը կանխորոշվել են ընտրված մեթոդիկայով՝ հաշվի առնելով հետազոտվողների բարեհարմարությունը, միաժամանակ գնահատելով մասնակիցների անվտանգությունն ու հնարավոր ռիսկերը: Հետազոտական բոլոր ընթացակարգերն ու կիրարկված սարքավորումները միանգամայն անվտանգ են եղել մասնակիցների հոգեկան ու հոգեֆիզիոլոգիական առողջության համար: Հարկ է նշել, որ առողջական վիճակի առանձնահատկություններով և հակացուցումներով անձինք չեն թույլատրվել հետազոտության:

Մոդելավորող գիտափորձում ներդրված ընթացակարգերում հնարավոր ռիսկերը նվազեցնելու համար փորձարարության արարողակարգում նախատեսվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում նաև հետազոտության պիլոտային փուլ՝ 5 րոպե տևողությամբ, բժշկական գննություն և ցանկացած պահի, առանց որևէ բացատրության, մասնակցի պահանջով և/կամ ցանկությանբ հետազոտությունը դադարեցնելու հնարավորություն: Հավելենք նաև, որ առաջնորդվելով փորձարարական հետազոտություններում ընդունված և գործածվող բարոյագիտական սկզբունքներն ու նորմերը պահպանելու պահանջով՝ հետազոտության յուրաքանչյուր մասնակից նախապես մանրամասն տեղեկացվել է գիտափորձի ընթացքի վերաբերյալ և պարտադիր գրավոր արձանագրել սույն հետազոտությունում ներգրավվելու իր կամավոր համաձայնությունը:

Մոդելավորող գիտափորձի նախապատրաստական աշխատանքներին զուգընթաց՝ կատարվել են նաև ենթադրյալ հետազոտվողների նախապատրաստմանը միտված աշխատանքներ: Հետազոտվողներին ներգրավելու և մոտիվացնելու նպատակով, նախ և առաջ, որպես արտաքին խթան՝ նրանք իրազեկվել են գիտափորձին մասնակցելու համար դրամային վարձատրության մասին, այնուհետև անմիջական գիտափորձից առաջ իրականացվել է հետազոտության ընթացակարգի մանրամասն հրահանգավորում, ինչն էլ իր հերթին նպաստել է գիտափորձում ներգրավված մասնակիցների հետաքրքրության մեծացմանը, ներքին մոտիվացվածության ակտիվացմանը, ինչպես նաև նրանց վարքային դրսևորումների կառավարմանը: Հետազոտվողների մոտիվացման համատեքստում առանձնահատուկ կարևորվել է արտաքին խթանների և ներքին մոտիվացիայի միջև հավասարակշռության պահպանումը: Մոդելավորող գիտափորձում ներգրավված մասնակիցների ֆիզիկական ակտիվության և վարքի կառավարման կարևորագույն գործիքներից մեկն էլ կանոնավոր հետադարձ կապն էր, որի միջոցով նրանք պարբերաբար տեղեկացել են իրենց հաջողումների և սխալների մասին, շտկել բացթողումներն ու ամրապնդել հաջող գործողությունները:

Ընդհանրապես, մոդելավորող գիտափորձերում ներդրված վարքի կառավարման մեթոդները թույլ են տալիս ավելի հստակ հասկանալ, թե ինչպես է մարդու վարքը ձևավորվում վերահսկվող միջավայրերում, և թե ինչը կարող է կարևոր լինել գործունեության այս կամ այն ոլորտում: Ուստի, դիտարկելով մոդելավորող գիտափորձին մասնակից անձանց վարքի կառավարման հոգեբանական կառուցակարգերը, կարող ենք առանձնացնել հետևյալ բաղադրիչները.

- կառավարելի օբյեկտի և միջավայրի մասին տեղեկատվության համակարգը, որում նրանք գործում են,
- ստացված տեղեկատվության վերլուծության միջոցը և դրա համեմատումը մոդելային բնութագրերի հետ,
- համակարգի լավարարմանը միտված կառավարելի որոշումները և հաջորդող գործողությունների ծրագրումը:


Լաբորատոր պայմաններում մեքենավարումը մոդելավորող գիտափորձի կազմակերպման և իրականացման արդյունքում ձեռք բերված երկարաժամկետ փորձառության ընդհանրացումը հնարավորություն տվեց կազմելու այդ գործընթացում ներգրավված բոլոր կողմերի համաձայնեցման և համակարգման նպատակահարմար ուրվագիծ, որը ներկայացված է նկար 1-ում:

Այսպիսով, ընդհանրացնելով սույն գիտափորձի մասնակիցների վարքաբանական դրսևորումների տարրապատկերը, կարող ենք եզրահանգել, որ վարքի կառավարման հոգեբանական առանձնահատկությունները մոդելավոր-

րող գիտափորձերում պահանջում են մանրակրկիտ պլանավորում և կազմակերպում՝ հաշվի առնելով մասնակիցների հուզական, սթրեսային և անձնային գործոնները:

Նկար 1

Մոդելավորման փորձի գործընթացում ներգրավված բոլոր կողմերի համաձայնեցման և համակարգման գծապատկերը



Մոդելավորող գիտափորձում ներգրավված մասնակիցները տարբերվում են իրենց ընկալումներով, հնարավորություններով, ինչպես նաև անհատական-հոգեբանական առանձնահատկություններով, որոնք էլ ազդում են նրանց վարքի և հետազոտության արդյունքների վրա: Այդ առանձնահատկությունները ընդգրկում են մասնակիցների սթրեսի և տագնապայնության մակարդակը, հոգեկան իմացական և հուզականային գործընթացները: Երբ հետազոտության մասնակիցները գտնվում են անհայտ կամ խստիվ վերահսկվող միջավայրում, նրանք հաճախ հակազդում են սթրեսով, ինչը կարող է փոփոխել նրանց որոշումները և վարքը: Հետազոտվողների անձնային առանձնահատկությունները նույնպես ազդում են նրանց վարքի և գիտափորձի ընթացքի վրա: Առավել ինքնավստահ և ինքնակառավարման բարձր մակարդակ ունեցող մասնակիցները, որպես կանոն, ավելի մոտիվացված են լինում՝ կատարելու դժվարին առաջադրանքներ և ստանալու դրական արդյունքներ: Մինևույն ժամանակ, անինքնավստահները կարող են անմիջապես հանձնվել անհաջողության առաջին իսկ դրսևորումների դեպքում, կորցնել հետաքրքրությունը և հրաժարվել գիտափորձից:

СААК ОГАНЕСЯН, АРСЕН ЛОКЯН – Психологические особенности управления поведением участников, вовлеченных в моделирующем эксперименте. – Моделирующие эксперименты в настоящее время стали важным инструментом изучения аспектов психологии и поведения человека. В такого рода исследованиях важно не только получить объективные данные, но и учитывать психологическое состояние, поведенческие проявления и мотивацию участников исследования, которые во многом обусловлены предэкспериментальным подготовительным процессом. Предполагается, что эффективное управление поведением и мотивацией участников исследования в моделирующем эксперименте дает возможность получить более точные и достоверные результаты, а также снизить вероятность получения ложных и фальсифицируемых данных, оторванных от реальности, и исключить ошибки, являющиеся результатом стресса или отсутствия интереса участников к процессу тестирования. Однако требование к чистоте получаемых данных также сопряжено с рядом ограничений: в искусственных лабораторных условиях практически возможно моделировать лишь отдельные эпизоды условий реальной жизни. А любая экспериментальная ситуация, формируемая в научном исследовании, является моделью реальности, в которой проявляются изучаемое психическое явление или его свойства. Поэтому успешность исследования определяется тем, в какой степени эта модель сохраняет или воспроизводит существенные свойства изучаемого объекта и игнорирует несущественные.

В данной статье рассматриваются современные теоретические подходы конструирования и подготовки участников моделирующего исследовательского эксперимента, а также их психологические особенности, будучи включенными в условия лабораторного эксперимента, и методические подходы к управлению их поведением.

Ключевые слова: *моделирующий эксперимент, функционально-сравнительная модель, моделированные нагрузки, водитель-испытуемый, мотивация, стресс, управление поведением.*

ՏԱԿԱԿ ՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ, ԱՐՏԵՆ ԼՕԿՅԱՆ – Psychological Characteristics of Participants' Behavior Management in Modeling Experiments. – Modeling experiments have increasingly become vital tools for studying human behavior and psychological dimensions. In such research, it is crucial to consider not only the objective data but also the psychological state, behavioral expressions, and motivations of the participants. It is hypothesized that the effective management of participants' behavior and motivation in modeling experiments enables the acquisition of more accurate and reliable results while reducing the likelihood of obtaining disconnected, false data caused by participants' lack of interest or stress. However, the requirement for the purity of the data obtained is also associated with a number of limitations: in artificial laboratory conditions, it is practically possible to model only individual episodes of real-life conditions. And any experimental situation formed in scientific research is a model of reality in which the studied mental phenomenon or its properties are manifested. Therefore, the success of the study is determined by the extent to which this model preserves or reproduces the essential properties of the object being studied and ignores the unimportant ones.

This article examines the psychological characteristics of individuals involved in modeling experiments and approaches to managing their behavior.

Key words: *modeling experiment, operational-comparative model, simulated workloads, driver-participant, motivation, stress, behavior management.*

Գրականության ցանկ

Հովհաննիսյան Ս. Վ. Կենսաբանական հետադարձ կապի կիրառման հոգեբանական չափանիշները մոդելավորող գիտափորձում / «Տեսական, փորձարարական և կիրառական հոգեբանության հիմնահարցեր», Երիտասարդ գիտնականների ժողովածու, ԵՊՀ հրատ., Եր., 2006, էջ 71-80:

Մասնագիտական գործունեության մոդելավորման հոգեբանական հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ / ԵՊՀ: Կազմ. և գլխ. խմբագիր՝ Ս. Վ. Հովհաննիսյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2012, 172 էջ:

Martin David (2008), *Doing Psychology Experiments*, 7th Edition, Thomas Watson Publishing, 364 p. // URL: https://www.researchgate.net/profile/Mohammad-Khakshour/publication/283284170_doing_psychology_experiments/links/5630738d08aefac54d8f1cc7/doing-psychology-experiments.pdf

Rodermund Stephanie C., Buettner Ricardo, Timm Ingo J. (2020), *Towards Simulation-Based Preplanning for Experimental Analysis of Nudging* / 15th International Conference on Wirtschaftsinformatik, March 08-11, Potsdam, Germany. // URL: https://www.researchgate.net/publication/337707434_Towards_Simulation-Based_Preplanning_for_Experimental_Analysis_of_Nudging

Аванесян Г. М. Психологические механизмы биологической обратной связи в эксперименте, моделирующем деятельность спортсмена, Вестник МАНЭБ, СПб., т. 9, № 3, Ер., 2004, с. 172-175.

Արժաշևա Ա. Լ. Գործող էքսպերիմենտը որպես մեկը հիմնական մեթոդներից դասական հոգեբանության // *Պեդագոգիկա և հոգեբանություն*, 2017, № 11(42), с. 94-97.

Гурский А. В. Моделирование ведущих параметров двигательных действий для оптимизации управления техническим мастерством лыжников-гонщиков: Автореф. дисс. канд. пед. наук. Малаховка, 1981, 17 с.

Медведев А. М. Генетико-моделирующий метод и диагностика новообразований учебной деятельности // *Психологическая наука и образование*. 2010. Том 15, № 4, с. 91-99.

Новик И. Б., Уемов А. И. Моделирование и аналогия // *Материалистическая диалектика и методы естественных наук*. М., 1968, 607 с.

Скиннер Б. Ф. Оперантное поведение. // URL: https://royallib.com/book/skinner_berres/operantnoe_povedenie.html

Тхорев В. И. Управление соревновательной и тренировочной деятельностью гандболистов высокой квалификации на основе моделирования: Автореф. дисс. доктор. пед. наук, Краснодар, 1999, 50 с.

Уткин В. Л. Имитационное моделирование энергетического обеспечения циклических движений у спортсменов // *Теор. и практ. физ. культ*. 1985, № 2, с. 14-17.

Хьелл П., Зиглер Д. Теории личности. 3-е изд. СПб.: Питер, 2008, 607 с.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Գայր՝ journals.y-su.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218

Հրատարակչական խմբագիր՝
Издательский редактор
Publishing Editor

Արմեն Հովակիմյան
Армен Овакимян
Armen Hovakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Թողարկման պատասխանատու՝
Ответственный выпуска
Issued by

Հասմիկ Եսայան
Асмик Есаян
Hasmik Yesayan

Տեխնիկական խմբագիր՝
Технический редактор:
Technical Editor:

Աննա Մկրտչյան
Анна Мкртчян
Anna Mkrtchyan

Ստորագրված է տպագրության 14. 03. 2025: